Hon. Rédaction
de la Revue arménienne HANTESS
au Couvent des R.R. P.P. Méchitharistes
à VIENNE
VII Mechitharistingasse 4

# ԱՐԵՒԵԼԵԱՆ
# ԹԱՄՈՒԼ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՁԴ ՏԱՐԻ

1894

ԹԻՒ 16 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1

ԽՄԲԱԳԻՐ - ՏՆՕՐԷՆ
Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՋՄԻՒՌՆԻԱ
ՏՊԱԳՐ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

# ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ


| | Երես | |
|---|---|---|
| Գերբնականը կենաց Մէջ | 497 | ԽՄԲ. |
| ԺԹ. դ. Տաբեղարձ Գաճակալութեան վեհ. Սաղրան Համիտ Բ ի. | 501 | ԽՄԲ. |
| Երգչուհին (վէպ՝) | 503 | Մ. ՎԱՐՊԵՏԵԱՆ |
| Միսի վրայ կարեւոր Գիտելիք | 508 | ՏՕՔԹ. ՓԱՇԱԵԱՆ |
| Կը մտածեմ | 513 | ՍԻՍԱԿ |
| Իմ Մանկական ցիշատակներս | 514 | Մ. ՆՈՒՊԱՐԵԱՆ |
| Վիճակ Ազգ. երկսեռ վարժարանաց Զմիւռնիոյ 1895 | 518 | Գ. Տ. ԲԱՐԹՂԱՄԷՍ. |
| Ի Տխրասուզ Մահ Օր. Ֆ. Կ. Սպարապետեանի | 521 | ՇՈՒՇԱՆ |
| Լրաբեր | 523 | ԽՄԲ. |
| Այլ եւ Այլք | 525 | Վ. |
| Հոգ. Որբախնամ Ընկերութիւն | 528 | |



Արուեստ լուսանկարչութեան. — 10 օրէն ուսանելի, յօրինեց ԿԱՐԱՊԵՏ Պ. ԲԱՐՍԱՐԵԱՆ։ Հրատարակութիւն Կ. Գ. փալագաշեան, Տպագրութիւն Նշան Կ. Պէրպէրեան, Կ. Պոլիս. գին 2 ղրուշ։

Լրացուցիչ դասընթացք Տարրական Քերականութեան արդի հայերէնի. Աշխատասիրեց ՍՄԲԱՏ ԴԱՒԹԵԱՆ. Տպագր. Աբամեան Կ. Պոլիս։ Գին 3 ղրշ.

Ա. Կ. ՍԷՖԼԷՄԵԱՆ. Մարդ ըլլալու միջոցը կամ կեանքի մէջ յաջողելու ճամբան։ — Կեդրոնատեղի Յ. Մատթէոսեան Թղթավաճառատուն, Կ. Պոլիս. Գին ընթիր քառթօնէ կազմ 8 ղրշ. ոսկեզօծ և փառաւոր լթակազմ 12 1/2 ղրուշ։

Լեւոն Տօլմասի կրէյցէրեան, Սօճատ Թարգմ. ԽՈՐԷՆ Մ. ՎԱՐԴԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԷ. Տպագր. Գ. Պաղտատլեան Կ. Պոլիս։ Գին 5 ղրուշ.

Համատօտ գրացուցակ. Պ. Պալինց գրատան. Ֆինճանճըլար Եօքուշու թիւ 20 Կ. Պոլիս. 1894.


*Ընդունք որ կ'փափաքին իրենց երկերն Թերթիս մէջ ծանուցուած տեսնել, կ'խնդրուին որ երկերկու օրինակ Խմբագրութեանս հասցնեն։*

ՄԵԾ ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

# Դ. եւ Լ. ՃԷՐԻՏՃԵԱՆ

Հայոց Ազգ Բաղ

Մեր վաճառատան մէջ կը գտնուի ամէն տեսակ պարէն, ինչպէս՝ ալիւր, բրինձ, արդար եղ, շաքար, խտհաւկ, ձէթ, մաքարօնի, ապուրի համար խմորեղէններ, պանիր, պիքալուներ, անուշեղէններ, գինի, քոնեակ, և այլն, և այլն և ամէն ինչ որոց պէտքը ըգալի է ամէն տան և մանաւանդ առանձին մէջ։

Խիստ ազան և ամէն մրցում մերժող գիներ։

# ՀԱՅԿ ԶԱՆԻԿԵԱՆ

ՄԹԵՐԱՆՈՑ ՎԵՐՄԱԿՆԵՐՈՒ

Գալ – Իւլ, Բլ– 4, 12 և 14

Կը ծախուին զանազան վերմակներ, անկողնի և բազմոցի համար թէ՛ բամպակէ և թէ՛ յարդէ բարձեր, գնդեղներ և ուրիշներ։ Նաև ցեզային և եգիպտական ամէն տեսակ բամպակ թէ՛ մածած և թէ՛ փոքր ի շատէ մաքրած։

Ազգասիրական վրայ մեծ հոգածութեամբ կը պատրաստուին զարդարուն վերմակներ հարսանեկան անկողնի համար։

Գնաւոր գներէ եկած յանձնարարութիւնք ժուռթով ու ճշտութեամբ կը կատարուին։

ՇԱՏ ԶՆԿԱՒՈՐ ԳԻՆԵՐ

# ԱՐԱՆՑ ՀԱՄԱՐ ՈՏՆԱՄԱՆՆԵՐ

Զանազան կաշիներէ, ինչպէս՝ դեղէ դերէ, Բելտին, Վիտել, ըռուբէն, ատլաս և ամառուան համար գունաւոր կաշիներ։

Ոտնամանիներու գինը պիտի որոշուի հագնողին ոտքին թուշէն համեմատ։ Ահա ՆՈՐՈՒԹԻՒՆ մը որմէ օգտուիլ կը խրատենք մեր գատ. ցաճախորդներուն և Ազգիս Հաստատութեան, որոնք՝ ասկէ դրութեամբ 0/0 10-15 ՆՈՒԱՂ պիտի վճարեն։

ԳՆԵՑՈՒՑԱԿ

Թիւ– 40 են գրկ 48 — Մեջտը 33 են

| | | | |
|---|---|---|---|
| Կօշիկ Ն–ըսկան կրկնաներկան | Թիւը | դրշ | 7 |
| Կօշիկ Բնդ » | » | » | 6 |
| Պօթ Լոճոտուր և կոտուած | » | » | 3 25 |
| Բօթին ու սուենկաւոր (մանեթարկը) » | » | | 2 75 |
| Պլօքեզ ու » | » | » | 2 75 |
| Նէս պլօքեզ և կէս պօթ | » | » | 2 50 |
| Ընքարբին | » | » | 2 37 1/2 |
| Բօթին ֆուտ | » | » | 3 75 |

Մինանիրքանը վերի ցուցակին գիներէն 1/4 մէջտ պակաս։
Ոտնամանիներ ի Տարէին 24 ժամէ կը յանձնուին,
Աժանութիւն, գիմացկունութիւն և ճաշակաւոր ձեւաւորութիւն։

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ ԿԱՆԽԻԿ

Այլ Նօթէլ Եկեղեցւոյն Ազգ պրան Տօր, Բլ– 47

# ԱՄԱՍ ՊՕՂՈՍ Կ. ՕՀԱՆԵԱՆ



ՄԹՐՆՑ· ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆԵՐՈՒ

Ն. Ժ. ԲԱՔԱՐԱՔԻ ԵԻ ԸՆԿ·

Ցրևց· ք֊ոչ 91 — Շևլեֆֆևոց 34

Գ֊ռնոխ, Քեհեր–Ալիբ 32/34

*Մարդ կրնայ ամեն տեսակ կարի մեքենաներու տէր լինել, ՄԻՄԻԱՅՆ շաբաթական 1/2 մէջիտ վճարելով։*

*Կօշկակարներու, դերձակներու և ճերմակեղէնի կարուհիներու համար՝ կարի մեքենաներու նոր «Ֆոռեմ» ամենէ տոկուն, ամենէ արագ, ամենէ դիւրին և առանց ձայնի է։*

*Մեր վաճառատանէն ծախուած ամէն մեքենայ ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ է։*

*Մեր ամէն յաձախորդներուն ջրի դասատուութիւնն և մեքենաներու նորոգութիւնն։*

*Աժէն տեսակ մեքենաներու նորոգութիւն։*

*Ասեղ, դերձան, իւղ չափաւոր գիներով։*

*Համոզուելու համար ԱՆԴԱՄ ՄԸ ՄԻԱՅՆ այցելել պէտք է։*

ՎԱՃԱՌՈՒՄՆԵՐՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

*ԻՋՄԻՐԻ համար — Արժէքին կէսը կանխիկ և միւս կէսը երեք ամսէն։*

*ԻՋՄԻՐԷ ԴՈՒՐՍ — կանխիկ։*

---

*Ամեն անոնք կ՚փափաքին հաստատուն և ճաշակաւոր ու միանգամայն խիստ չափաւոր գիներով՝ կազմեալ դրքեր ունենալ թող դիմեն, 1857ի իվեր հաստատեալ, Եվանկէլիքօն Ցուռնաց դպրոցին անցքին մէջ թիւ 8*

*տէր* **ԱՓԱՆԱՍ ԱՆԿԷԼԻՏԻՍ**

---

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԴԵՂԱՐԱՆ

# ՋԱՐԵՀ ՇՆՈՐՀԱԽՈՐ

*Հայոց ք֊ոչ, Բեշիկթէշ Ճարտէ*

*Ամեն տեսակ դեղերու մեծ խնամքով պատրաստութիւն*

*Չափաւոր գիներ*

*Գաւառներէ եկած հիւանդներու ամեն դիւրութիւն կը տրուի, իրենց հիւանդութեանց տեսակին յարմար բժիշկներ կը ներկայացուին և անոնց պէտք եղած դեղերը մինչև իսկ գաւառները կը ղրկուին։*

# ԱՆԿԱՕ–ԻՍԹԸՐՆ

## ՔՕ–ՕՐԷՐԱԹԻՓ ՔՕՄԲԱՆԻ, ԼԻՄԻԹԸՏ

Ցրտնկաց Ընդ

## ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳ

*Դիմեցէք մեր ընդարձակ վաճառատունը ինչ բանէ որ պէտք ունենաք, հագուստեղէնէ ինչպէս ուտեստեղէնէ, կամ կարասիէ ինչպէս հօտեղէնէ, պատրաստ հագուստներէ ինչպէս խոհանոցի վերաբերեալ ամէն տեսակ պիտոյքներէ, զանազան րլուզեղէնէ և մետաքսեղէնէ ինչպէս զարդարանքի առարկաներէ, վերջապէս ԱՄԵՆ ԻՆՉԷ որ ձեր մտքէն ու երեւակայութենէն կրնայ անցընել։*

*կրկնակի ԱՁԱՆՈՒԹԻՒՆ պիտի գտնէք, որովհետեւ մեր ապրանաց տակունութիւնը ինչպէս նաև դներու անհամեմատ աժնութիւնք հանրածանօթ են։*

ՎԱՐԶՈՒԹԻՒՆ

---

## Լ'ԻՆԻՕՆ

(L'UNION)

### ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԴԻՄ ՀԻՄՆԵԱԼ 1828 Ի Ն

Ընկերական Դրամագլուխ և Պահեստի Ցր. $2,000,000

ԻՒՆԻՕՆ ապահովագրական ընկերութիւնս նկատելով որ Անգլ. ընկերութիւնները իրենց արդի ապահովներէն 30էն 50 0/0 շեղջ մը կ'ընեն, պատիւ ունի ծանուցանելու իւր բազմաթիւ յաճախորդներուն և արդյ հասարակութեան թէ պատրաստ է ընդհրկել յաւելուածական 20 0/0 շեղջ մը այն գումարին վրայ զոր Անգլ. ընկերութիւնները կ'առնեն իրենց սովորական 30 0/0 շեղջը ընդէ յետոյ։

ՓԱՆ Ե. ՊՕՍԿՕՎԻՉ
JEAN P. BOSCOWICH

Ընդհանուր Գործակալ Զմիւռնիոյ

LA NEW-YORK

# ԼԱ ՆԻՈՒ-ԵՕՐՔ

Կենաց ապահովագրութիւն հաստատեալ 1845 ի

Դրամագլուխ. — Պատրաստ դրամ ֆրանկ 771.000 000

Աճեալ կալուածք եւ առանձ յետոյա ֆրանկ 30 000 000

*Երթալիս համար Ընդհ. Տնօրէնութիւնն ի Բարիզ, ընկերութեան կալուածոց մէջ, 16 Պուլվար տէ չիվալիէն և 1, 3 Ռիւ Լը Բըլեթիէ:*

*Դրամատուն ի Թուրքիա — Օտ. Կայս. Գանքա:*

*Զմիւռնիոյ Ընդհ. Տնօրէն, Պրն. Վ. Ֆ. Վանտէր Զէ, Լօքալ Հէօնիշլէր և Գննիչ Պրն. Հէրման Գիւն, Լօքալ Սբօնդի, թիւ 13, պատիւ ունին ծանուցանել թէ՝ պատրաստ են ամէն տեղեկութիւն հաղորդել ընկերութեան տուած ապահովագրութեանց վրայ:*

*Ապահովութիւն կենաց, կենապահ- կամ ժամանակաւոր ապահովիչով, տանալի 15 կամ 20 տարուան միջոցի վերջ: Ի դէպ մահու վճարում ապահովեալ դրամագլխոյ, վճարուիլ ապացուցողին: Տղայոց համար նիւթական հատատութեան:*

ԿԵՆՍԱԳԻՏԻ ԵԿԱՄՈՒՏ:

*Ապահովագիրները ընկերութեան շահերուն ամրապնդութեան կը մասնակցին:*

ՄՈՂՈՍ ԱՐԱՀԱՄԵՄԱՏ

33

Օտան Զոպե խան, Վերէ յարկ

# ԳԵՐԶԱԿ

*Իւր ամէն յաճախորդներէն դնահատուած իւր յայտագ ձեւերին, գործածած ապրանքներու ընտրութեան և արագ պատրաստութեան համար:*

Ա.ԺՈՒՆ ԳԻՆԵՐ

Վ. ՍԻՏԻ — V. SIDI

*Մեծ կալմատուն Բարիզեան և Անգլիական ճաշակով:*

*Ամենաընտիր կապմ, Նուագատուներու և Տուամարներու*

ԽԻՍՏ ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐ

17, Պոլպոլեաց խան, Ֆրանկաց Թաղ

ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԽԴ. ՏԱՐԻ

ԹԻՒ 16 1 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1894

## ԳԵՐԲՆԱԿԱՆԸ ԿԵՆԱՑ ՄԷՋ

*Մարդս՝ արդէն հրաշալի, գրեթէ անմեկնելի չրջումը ներու ծնունդն, երբ գեռևս մանկային հասակին մէջ, կարծէը ապրիլ հրաշալեաց աշխարհի մը մէջ։ Ամեն բնական պատահար, ամեն կենսական դէպ, ամեն ֆիզիքական երևոյթ մեկնելու անկարող, կ'ընդունէը զանոնք իբրև դերմարդկային զօրութեան արտայայտութիւն, ուրու համար բաղինները, տաճարները կ'կանգնէը, պատգամներ, քուրմեր ու պաշտօններ կ'հաստատէը։ Թէև դիտութիւնն՝ երբեմն անքննելի և անհասանելի նկատուած չատ խորհուրդներ ու կնճիռներ մեկնեց ու պարզեց, թէև ցրուեց այն մեալն որ առ հասարակ մարդկային մտքի ներքին լոյսը կ'սքողէը, և կարգ մ'աւանդական, պատմական նշաններ ու սքանչելիք երևոյթ յատուկ գոյ-*

ներոնին բացատրեց, ոսկյայն մարդ՝ լուսամիտ, դիտուն և իմաստուն մարդն անգամ, թերևս իբրև դերբնականին հակամէտ՝ ցարդ կ'սիրէ դեգերիլ այն աշխարհին մէջ ուր գաղտնիք մը, հրաշք մը, անյայտ զորութիւն մը կ'կարծէ ընդնշմարել, և եթէ այդ ամեն հակաբնական խորհուրդներու լիովին չհաւատար, դէթ զանոնք մարդկային վիպասիրական հակումներուն համապատասխան երևոյթներ կ'դատէ, կ'քաջալերէ իսկ և ճշմարտութեան հետ զատրանքն իրրև համեմ և սփոփանք կ'մեծարէ։

Եւ ի՞նչ է փերիներու, ճիներու, առակներու համար մանկտւոյն մարմնջն, զոր ոչ դաստիարակութիւնն զօրացնելու կ'ճգնի չիմարարար, ի՞նչ է հրաշալի ազրիւրներու, ծառերու և կայծերու համար մի չատ ժողովրդոց ջերմեռանդ պաշտօնն, ի՞նչ է դաս մը դիտուններու բանակցութիւնն ու մեկնութիւնն ոգիներու, աստղերու և հրաշագործ այլ անվաւեր մտահաներու նկատմամբ, եթէ ոչ հրաշասիրութեան ղդալի ապացոյցներ։

Ա՛նպէս կ'թուի թէ մարդ այս տափակ, անշահ ու կոշտ հողին ղազրութիւններէն տաղտկանալով՝ վեր, ընդվիշտ վեր սրանալու անկուշտ տենչով մը, ունայնասիրութեան նման փառասիրութեամբ մը կ'փարի վերայականին, գերբնականին և իր կենաց ամեն գործերուն մէջ սուտն իրաւին, դեղեցիկը տգեղին, նիւթականն հոգևականին և ի վերջէ աւելորդապաշտութիւնն վսեմագոյն հաւատալիքի հետ կ'խառնէ։

Մարդկային բնաւորութեան յատուկ տկարութեանն թէ ոչ հոգևկան անձուկներու անսահմանութեան մէջ վնասելու է այս, եթէ կարելի է ըսել, մտային երկակենցաղութիւնն, առուերի և լոյսի պաշտամունքը. . . ինչ որ լինի չարժառիթը, այս իրաւ է թէ՝ ըստ որում անբաժան են նիւթ և հոգի, ղդացում և միտ, եթէ մարդկային դիտութիւնն ամեն բնական և կենսական գաղտնեաց վերջին բառն իսկ գտնէ, դարձեալ մարդս նորագոյն հրաշքներ հնարելու և անոնց հաւատալու փափաքէն չպիտի կասի։ Հին ու նոր ազգերու կենաց պատկերն, ի-

բենց բնոյթին ու սովորոյթը, կրօնն ու դրականութիւնն, արուեստն ու ճարտարապետութիւնն կ'հաստատեն այս դիտողութիւնը։

* * *

Մի և նոյն դիտողութիւնը կ'ներկայէ անգլիացի հեղինակ մ'երբ կ'ըսէ թէ՝ — Գերբնականն հնուց նշանաւոր դեր ունեցած է դրականութեան, արուեստի և ժողովրդոց կենաց մէջ։ Ընտարակոյս ամեն ժամանակ և ամեն պայմաններու մէջ գրական և նկարչական արտադրութեանց չարժառիթն է եղած այն։ Եգիպտոսի մեհենական գրերն, Քաղդէացւոց և Ասորեստանցւոց պնականերն, Ցունական տաճարներն, Հռոմէական քերթուածներն, Եբրայական նուիրական մատեաններըը, բոլորը լի են գերբնական ներշնչութեամբ։ Եթէ այդ տարրը վտարուէր, պիտի կորուսէին այդ գործերն իրենց նշանակութիւնն և ոչ հրահանգ ոչ բերկրանք պիտի մատուցած լինէին մարդկութեան՝ այնքան դարերէ ի վեր։ Միլթին դարերու դպրութիւնն և արուեստն հինէն աւելի կապ ունէր գերբնականին հետ։ Ցունական և Հռոմէական արուեստն թատերական տեսարանի իրրև մաս կ'ներմուծէր աստուածներ։ Ընտարակոյս աստուածներն իսկ՝ թատերական անողոքելի ճակատագրին ենթակայ են, և այդ ճակատագիրն ևս գերբնային է։ Այս ևս իրաւ է, որ հինգերուն դրական և արուեստական արտադրութեանց մէջ գերբնականը սահմանափակ տպարէզ մ'ունէր։ Դիք ու դիցուհիք տեսարանի վրայ կ'երևէին միայն երբ բարերար կամ վրէժխնդիր գործողութեան մը հարկը տեսնուէր։ Նամաւոր էր միշտ իրենց միջամտութիւնն, որ կ'յայտնուէր մարդկային առաքինութեան կամ մոլութեան մը պատճառաւ։

Բայց երբ աշխարհն միջնադարեան խաւարէն ելնելով՝ վերածննդեան երկանց մէջ ընկաւ (Տնուեդ՝ որ՝ մեր դարուն մէջ՝ կամ արբուն և կամ զառամ հասակը մտած է կամ վերածնելու պէտք ունի) այն ժամանակ գերբնականն՝ իրրև առաջնակարգ գործակ, ձևեց գրականութիւնն, արուեստն, զգացմունքն, ժողովրդեան կեանքը։ Գերբնականն էր միայն գործունէի բնազդն. ամեն թատուսի մէջ հրաշք մը կ'երևէր. ամեն ամպէ պատգամներ կ'տեղային. այր ու կին կ'շարժէին, կ'ուտէին, կ'աշխատէին

ու կ'ննջէին մեզ պէս, սակայն մեզ անծանօթ մթնո-
լորտի մը մէջ այս ամեն գործողութիւնները կ'կատար-
ուէին։ Ա՛յն էակներուն համար գերբնային երեւոյթ մը,
դիւահարութիւն մը, օրհնաբեր միջնորդութիւն մը, բա-
րեգէպ և ազդեցիկ հրաշագործ անէծք մը այնքան բնա-
կան արկածներ էին, ինչպէս առաւնտեան մեզ համար։
Պարզապէս չէին կարող ըմբռնել կեանքն, կամ՝ աշխարհն
առանց գերբնային էակներու գործօն ներկայութեան
իրենց մէջ, առանց դերմարդկային դիպաց առօրեայ պա-
տահման։ Հարկ չկայ վիճաւել թէ այս իրողութիւնն ո՛ր-
քան ուշացուց, ո՛րքան վտանգաւոր մեր վայելած արդի
քաղաքակրթութիւնն։ Բաւ է ըսել, որ գերբնապաշտու-
թիւնը նախորդ դարերուն թանձր հեթանոսութեան
տրամաբանական հետեւանքն էր։ Ա՛յլազան ձեւերով կը
մնմնաւորէր այն՝ դերընտիր հրաշաշաւիղներն կամ՝ ա-
ռասպելներն, ամեն պուրակ, առուակ ու բլրակ չէնցնելով
սիրալիր ու գոգտրիկ էակներու չնորհիւ, բայց, դժբաղդ օ-
րէն, անտառներն, դետակներն ու լեռներն մինչեւ ան-
գամ օդը չէնցնելով, խօլական և անգութ սատաններ-
րով որոց նպատակն էր միայն քանդել։

Հին կռապաշտական դիւք դեռևս կ'տիրէին կարգ մը
ջերմեռանդ քրիստոնէից մտքին ու երեւակայութեան
մէջ, սակայն չէին այլ եւս այն բարեգործ, թէեւ բռնասէր,
հեթանոսական դիւք, որ կ'սիրաբանէին ու վրէժ կ'լու-
ծէին, այլ մարդկային ադդի տիեզերական թշնամիներ էին
որ կ'ծածկէին իրենց եղջիւրներն ու սմբակները։ Իրեւ ա-
ռօրին կենայ տարր՝ գերբնականին այս թանձր և անվի-
ճելի հատատալիքն՝ խաւարին դարերու մէջ, հանրային
երեւոյթ մ'էր որ տեւեց վերածննդեան ժամանակներն,
դիտական ճշմարտութեան լոյսն զոյն լիովին չցրուեց և
տակաւին, թէեւ ոչ այնքան ազդեցիկ, կ'շարունակէ իր
ներգործութիւնն զանազան մնայնի երկերու, նոյնպէս
ընտանեկան, կրթական և անտեսական խնդիրներու մէջ։

Ուստի՝ զարմանք չէ՝ եթէ դարերու ներգործութեամբ
ղորացած բնազդ մը, ձկտում մը՝ երեւցած է և դեռ կ'ե-
րեւի ոչ միայն մեր հին կրօնական, պատմական գործերու
մէջ, և մեր կենաց զանազան ալարագաններու մէջ, այլ
և եւրոպական հանճարներու հրաշակերտներու մէջ, և
այս կարգէն են անոտիապաշտական և թոռչական արա-
րողութիւններ որ ճշմարտութեան և արդարութեան
ճամբուն վրայ լոկ մոլորեցուցիչ հուրեր են։

Շ. Հոդ.

## ԺԹ. ԴԱՐԵԴԱՐՁ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ

# ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻԴ Բ. Ի

*Ժամանակը կ'հոլովի և իր հետ կ'տանի մինչև իսկ դահակալները՝ որ չեն թողուր հետք մը, նշան մը, յիշատակ մ'երկրագունտիս վրայ, սակայն կան վեհապետական հոգիներ, յոյժ հաղուագիւտ, որ իրենց գարուն վրայ կ'դրոշմեն իմաստութեան, վեհանձնութեան և մեծագործութեան կնիք մ'որ անջնջելի կ'մնայ, և փառաբանութեան և օրհնութեան աղաղակներ կ'խլէ ժողովրդոց սրտին խորէն։*

*Այս վեհապանծ հոգիներու կարգին մէջ առաջին տեղը կ'բռնէ մեր սիրելի վեհապետն ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻԴ ԽԱՆ, որու գահակալութեան տարեդարձի աւետաբեր օրն այն ինչ կ'հնչէ, և ահա միլիօնաւոր ժողովուրդներու սրտին թելերն, այդ խնդաւիթ և հանդիսաւոր ձայնին կարօտ, կ'թնդան, կ'խայտան և միաշունչ կ'օրհնեն իր անունն՝ ջերմագին մաղթանք ուղղելով աւ էն, որ իր թանկագին արևն պահէ յաւէտ, որպէս դի վայելէն այն ամեն բարիքն ու չնորհներն զոր իր աննման ողորմածի-*

բութեամբ, իմաստուն իշխանութեամբ և խորունկ քաղաքականութեամբ կ'սփռէ իր լայնածաւալ պետութեան ամեն կողմերն,

Բազմաթիւ են՝ թէ կրթական թէ տնտեսական, թէ առևտրական, թէ ելմտական թէ մշակական և այլ ճարտարութեանց կարգին մէջ այն բարիքն ու մեծագործութիւնները որ Օսմանեան աշխարհին նոր դանձեր բերին և ժողովրդեան դործունէութեան և զարդացման նոր ասպարէզներ բացին,

Այս ընդհանուր խնդակցութեան օրն՝ «Օդոստոս 19» քաղաքս՝ որ վեհ. Սուլթանին Հայրական խնամոց և լուսասէր խորհուրդներու արժանի և հատատարիմ դործակիրն ու թարգմանն ունի յանձին մեր բարձր. կուսակալ՝ Հասան Ֆէհմի փաշային, հմայութեամբ մ'այնպիսի բերկրութեան, ոգևորութեան և լուսավառութեան ցոյցեր արտայայտեց որու նմանն երբէք տեսնուած չէր։ Բոլոր բնակիչները՝ իրրև մի մարդ՝ միակամ և միասիրտ ասոնցին դահակալութեան պատմական ու նշանակելի ասոնն, և գիշերն ցերեկ ըրին։ Քարափը չքեղ տեսարան մ'ունէր, դոյն դդոյն լապտերներով կ'փայլէր, վեհափառ Սուլթանին անունն իրրև արև շողշողալով ոչ միայն պաշտօնատուներու, անուանի պաշտօնատուրներու և անձնատուրութեանց ապարաններու ճակատն, այլ և ամեն սիրտերու մէջ։ Ժողովրդային ճշմարիտ հանդէս մը, որ իրրև հմայիւք կ'կատարուէր, վեհափառ Սուլթանի բարերար և հմայիչ անուան հովանւոյն ներքև։

Այս ամեն օրոտալի խնդութեան, ցնծագին երաժշտութեան, սրտեռանդն երդերու նպատակն ամենուն չարժումներուն ու դէմքին վրայ կ'երևէր։ Պրատհոս ազդապետները՝ որ ազօթքի շեշտեր ունէին, կ'ուղղուէին երկինն որ շատ ու շատ տարիներ պահէ պահպանէ վեհ. Սուլթանին կեանքն՝ յօդուտ և ի զարդացումն մարդկութեան, և ամենքն կ'դոչէին ցնծագին, ԿԵՑՑԷ, ՑԱՒԻՏ ԿԵՑՑԷ ՄԵՐ ՎԵՀԱՓԱՌԸ ԴԱԶԻ ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ ԽԱՆ։

# ԵՐԳՉՈՒՀԻՆ

## ՎԻՊԱՆ

### Ա

Քառակուսի սրահակ մը երկու պատուհաններով ու պաշգամով մը, հեռուն կը տարածուի Իզմիրի գեղեցիկ խորշը որ Էլսիի ուշը կը գրաւէ երբ միւնակ մնայ կամ ձանձրացնող այցելու մը քաղաքավարութեամբ ճանրել ուզէ։

Մեծ ու պզտիկ լուսանկարներ երգչուհիներու, պատկերներ, մանր մունր զարդեր, պզտիկ սիրուն գեղրներ կը ծածկեն պատերը։ Հոս ու հոն կախուած դարակները ու երկու եւիեննոսէ կահակալներ։ Ճիշդ բազմոցին վերը և անոր երկայնութեան հատատար թաւ ու թաւշանման գորգէ լայն ժապաւէն մը գամուած է պատին, աւելի վերը կը բացուի մեծ հովահար մը Զինաական, գոյներու այլանդակ խառնուրդ մը, չիներու, Զինուհիներու, փիղերու, ծառերու, բակոտաններու տարօրինակ պատկեր մը, ու այդ հովահարին տակ՝ թաւիշէ մեծ չրջանակի մը մէջ՝ քով քովի գրուած քանի մը լուսանկարներ կը ներկայեն Էլսին զանազան դիրքերով ու հագուստներով, դիրքեր որ Էլսիի բնական գեղեցկութիւնները երեւան կը հանեն, հագուստներ որ անոր վայելուչ հասակը կ'երգեն։

Այս է ահա սենեակը՝ ուր երգչուհին կ'ընդունի, կը ճաչէ, կը նուագէ, կ'երգէ, նարտ կը խաղայ, կը սիրաբանէ, կը պռոայ, կը հայհոյէ, կը գգուէ· ու երբեմն կուլայ, այո՛, երբեմն ալ կուլայ, որովհետեւ այն կինը որ չի գիտեր լալ ինձ համար անկատար կին մ'է, ուր մնաց երգչուհի մը· · · ։ Դաշնակ մ'ալ կայ այս սենեակին մէջ որու վրայ նօթատետրերն կը հանգչին, խառնիխուռն, ու աղտոր մեծ ծաղկեփունջ մը իր քանի մը օրուան կեանքը կ'ապրի բիւրեղէ ծաղկամանի մը մէջ, սեղանի մը վրայ։

Դուռ մը կայ սրահակին մէկ անկիւնը, կարմիր կապոյտ հատու ծանր պատուաւէ վարագոյրներու տակ գրեթէ անհետացած դուռ մ'որ կը տանի ննջարանը, սիրոյ գղտրիկ բոյն՝ ուր լոգակահը կարծես կը յոգնի, եթէ ներելի է այսպէս ըսել, իր

մեծ ու պզտիկ սրուակներու, տուփերու և տեսակ տեսակ հոտեղէններու, փոշիներու, ներկերու, աչքի, շրթի, ակռայի, երեսի ջուրերու բեռին տակ. երկու մեծ հայելատոր պահարաններ կան հոս՝ դիմաց դիմաց՝ որ իրենց ներսն ունին էլսիի ըզգեստեղէններու հագուստները ու դուրսը աղտոր մարմինի մը հրապոյրներուն մանրամասն դաղտնիքը, անկողինը, ճերմակ, մաքուր անկողին մը, կարծես կը վարդագունի իր կարմիր մետաքսէ վերմակով ու բարձերուն կողմը՝ պատէն կախուած՝ կը փայլի բէվօլվեր մը որու վերը՝ սև սնդուսի վրայ՝ ոսկի տառերով ասեղնագործուած կարճ աղօթք մը անկիւրէն. աղօթք ու բէվօլվեր, ահա էլսիի երկու պահապան հրեշտակները:

Կէս-օր երկու ժամ անցեր էր, էլսի կը ճաշէր. տեսակ մը սրտնեղութիւն կար վրան, երգչուհիներու յատուկ ջղոտութիւն մը, արդիւնք կանացի կազմուածքի բնական տրամադրութեան աղմկալի կեանքի մը յոգնութիւններուն, ու կը պոռար, կը կանչէր կերակուրը բերող սպասաւորին դէմ. ինչո՞ տեղ կը դնէին պինքը, ինք որ այնքան վարձք կը վճարէր չէնք շնորհք բան մը չի՞ պիտի դանէր այս տունին մէջ, պարզապէս կը գողնային իրմէ, կծծի էր, անպիտան էր՝ տան տիրուհին, լրբուհի մը և . . . ուրիշ ածականներ ալ:

Այս պահուս Յարեմիկ աղա Տիրատուր, երկար հասակով, մեծ պեխերով մարդ մը վաթսունի մօտ, ներս մտաւ ամենաանուշ ժպիտ մը շրթերուն վրայ.

—Մի՛, մի՛ բարկանար, էլսիս, ի՞նչու ինքիրմէդ ելեր ես, անուշիկս, ըսաւ կակուղ ձայնով մը:

—Այս սպասաւորին պէս կռտ մարդ տեսած չեմ, ինչպէս չի բարկանամ, դոչեց էլսի, քիչ մնաց պնակը գլուխին պիտի նետէի. . . հապա տան կինը, ապուր մը եփեր է որ . . . բո՛ւհ. . .

— Խեղճ էլսիս, ըսաւ Տիրատուր փաղաքշօրէն ու երգչուհիին քովը նստելով, այսպէս ուրեմն կը վարուին հետդ հա՛, ասկից ետքը ես պիտի ղրկեմ կերակուրներդ, առաջին կարգի ճաշարանապետի մը պատուիրեմ քեզի ամեն օր մարդ մը ղրկէ և ուղածդ ապսպրէ:

— Բէ՛հ . . . քու խոստումներդ ալ . . . ո՞ւր են ձեռաքէ գուլպաներս և թաշկինակներս . . .

— Այս իրկուն անպատճառ . . .

— Բո՛ւհ . . .

— Ի՞նչու առանկ կը վարուիս հետս էլսի, չ'ես գիտեր որ կը սիրեմ քեզի . . . կը պաշտեմ . . .

— Օ՛հ, ըրաւ երգչուհին, արհամարհոտ, այսօր ջիղերս վրաս են, կ՛աղաչեմ գնա և՝ մինչև որ գուլպաները և թաչկինակները չի բերես՝ մի դար հոս։

— Է՛լսի . . . ։

— Օ՛ֆ. . . հանդարտ նստի՛ր. . . մի՛ դպչիր. . . — բայց երգչուհին յանկարծ բան մը յիշելով՝ կակուղցաւ — սիրելիս, յարեց, դերձակուհիս հաչիւս զրկեր է, ա՛ռ զրպանդ դի՛ր, ետքէն կը վճարես, պզտիկ բան մ՛է։

Պզտիկ բան արդարև, յինուն երկու ոսկիի հաչիւ մը զոր այս արբուն սիրահարը զրպանեց զրեթէ ուրախութենաւ։

— ինչ անուշ մարդ ես, դայլայլեց երգչուհին, իր ճերմակ կակուղ ձեռքով պզտիկ չոյիչ ապտակ մը տալով իր տարփածուին։

— կեանքս, կեանքս քուկդ է, հրեշտակս, ըսաւ Յարեթիկ։

— Գեղի չափ անուշ մարդ տեսած չ՛էի, հաւատա՛, սիրելիս, անգամ մը, Լօնտօնի մէջ, պատահե՛ցայ մէկու մը, բայց ան քեզի չ՛ներ հաւասարեր, անցեալ տարի ալ Վիէննա կոմս մը ճանչցայ . . . կոմս . . . կոմս . . . ինչ էր անունը . . . ինչ որ է . . . ան ալ ազնիւ մարդ մ՛էր . . . բայց դուն Յարեթիկս . . , դո՛ւն — ու երգչուհին համբուրեց Յարեթիկ աղան — դուն, քեզի պէս չ՛կայ . . .

Աղէկ կ՛ընէր ըսի եթէ ըսէր թէ աշխարհի ութերորդ հրաշալիքն էր Յարեթիկ աղան։

— Ինձի մտիկ ըրէ, Յարեթիկ, աւելցուց երգչուհին, այսօր օդը ազուոր է, գնա՛ կառք մը ղրկէ, պտոյտի ելլենք։

— Սիրով, անուշի՛կս, բայց հինգ վայրկեան ևս նստիմ։

— Չէ՛, Չէ՛, հիմա, մինչև հագուիլս ժամը չորս կ՛ըլլայ, համբուրէ զիս, իրիկուն կ՛սպասեմ քեզի։

Ու մեր դեռատի սիրողը՝ որու չափ անուշ մարդ կը խոստովանիմ որ ես ալ տեսած չեմ՝ մեկնեցաւ ակամայ։

## ԳԼ

Տիրատուր Յարեթիկ աղային մէկ հատիկ աչքին լոյսը Գեւորգ — բայց, չի չփոթենք, Յարեթիկ երկու աչք ունէր — տասնըվեց տարու դպրոցական մ՛էր բայց կատարեալ չարաճճի մը. սառահակ մը Տիրատուրի այս չառաւիղը, իր դասընկերներուն ահ

ու դողը, ու եթէ երբեմն՝ դպրոցին մէջ՝ իր յանցանքները կը ներուէին՝ պատճառը Յարեթիկ աղային ջոջ մը ըլլալը չէր միայն, ինքը բնական արթնութիւն և առումունենալով շուտ կը սորվէր իր դասերը և հետևաբար՝ իր անհանդարտութեան հակառակ՝ դաստատուները կը սիրէին դինքը։

Գէորգ քարափին վրայ տեսեր էր Էլսին օր մը, չքեղ կառքի մը մէջ, սև փետուրներէ պօսի մը մեջէն դուրս ցատկող ճերմակ դէլեգիկ ու սեգ դէմք մը որ գրաւեր էր դինքը ու անկից ետքը քանի մը անգամ պատահեր էր անոր ոտքով կամ կառքով ու ամեն անգամ տեսնելուն աւելցեր էր այդ կնոջ իր վրայ ըրած ազդեցութիւնը, այնպէս որ հիմա անոր հետ տեսնուելու յիմար փափաքով մը կը տանջուէր, Գևորգ նամակ մը գրեր էր անոր, պզտիկ նամակ մը իւր տասնուվեց տարիներու կրակոտ եռանդովը լեցուն, բայց հետևեալ պատասխանն առած էր։

«Ձեզի ճանչնալու պատիւը չ'ունիմ, պարոն, հաճեցէք գիշերը Մօնագօն գալու, ուր կ'երգեմ»։

Գէորգ Էլսիի դիրը հարիւր անգամ համրուրելէ ետև – ինչ որ այս տեսակ գիրերու անխուսելի ճակատագիրն է, գոնէ այսպէս կ'ըսեն վէպերը — մտածեց Մօնագօն երթալու մէջը վրայ. ի՞նչպէս երթալ պէտք էր, դիւերները չ'էին ձգեր դինքը որ դուրս ելնէ, բնականաբար տասնուվեց տարու դպրոցականի մը ներելի չէր այս բանը, և սակայն դժուարութիւնը կը սաստկացնէր իր փափաքը, կ'ուզէր Էլսին տեսնել անպատճառ։ Եւ գիշեր մը իր սենեակը կը քաշուի, կ'սպասէ որ ամեն մարդ քնանայ, յետոյ՝ իր ոտքերուն ծայրին վրայ քալելով կամայ կամայ՝ մինչև դուռը կը հասնի, պահ մը կանգ կ'առնէ ականջները ցցած, լուռ է տունը, առանց ձայնի դուռը կը բանայ, կը դոցէ ղայն զգուշութեամբ, կ'երթայ և մինչև առտու չի վերադարնար։

Գէորգի առաջին ու վերջին դիշերույին փախուստը կ'ըլլայ այս, որովհետև Յարեթիկ աղան ոչ միայն խիստ պատիժ մը կուտայ իր տղուն, հապա այդ օրէն դուռը կրկին ու կրկին կը կղպէ ու բանալիները կը պահէ իր քով, բարձին տակը։

Տաս օր կ'անցնի ու դպրոցէն լուր կը ղրկեն թէ Գէորգ ստէպ բացակայ կ'գտնուի, երբեմն կէսօրէն ետքը, երբեմն առաջին օրը։ Յարեթիկ աղան կրակ կը կուրէ, «իր տղան դպրոց չ'երթար հապա ո՞ւր կ'երթայ», հնհնուք մը կ'առնէ դինքը, դիշերային փախուստը ու հիմա այս դպրոցական փախուստները

*կատարածները կը յարուցանեն իր միտքին մէջ, մարդի բան չ'ըսեր, կ'երթայ չիտակ իր հին գրապրին ու գայլ ացած ձայնով մը կ'ըսէ, « Սեդրոս, աղուս հետևէ, նայէ՛ ուր կ'երթայ, ինչ կ'ընէ, ու եթէ, Սեդրոս, երեք օրուան մէջ կատարեալ տեղեկութիւն չի բերես, ականջներդ . . . կը փոխեմ, Սեդրոս »։*

*Երկու օր եառքը, Սեդրոս՝ կէս – դարնոց պատուական մէկը՝ Յարեթիկ աղային կ'իմացնէ թէ Գէորգ քարափին վրայ եռայարկ տուն մը կ'երթայ ուր Էլսի անուն երգչուհի մը կը բնակի ու բացատրելէ ետև տունին ճիշտ ուր գտնուիլը կ'անելցնէ, « կարծեմ ականջներն . . . փոխելու . . . պէտք չի մնաց »։*

*Որքան ալ թեթև աղու ժպիտ մը չողշողար Սեդրոսի կլոր երեսին վրայ, որքան ալ անուշ, բոլորովին անուշ ձայնով մը արտասանէր այս վերջին բառերը, է՛հ, անչուշտ, անոնց մէջ վիրաւորուած արժանապատուութեան մը պզտիկ չեչոը կար։*

*Էլսի, քարափ, եռայարկ տուն, Յարեթիկ աղան ցտակեց, յետոյ նստաւ՝ ծնօտը ափին մէջ՝ մտախոհ, Էլսի, քարափ, եռայարկ տուն, ուրեմն Գէորգ այս հատակէն սկսեր էր երգչուհիներու թակարդն իյնալ, բայց մեծ էր վտանգը, Տիրատուրի միակ չուռափղին գլուխը կրնար վորձանք մը գալ, պէտք էր պինքը ազատել, պէտք էր այս յարաբերութեան՝ որ կրնար ցաւալի հետևանքներ ունենալ՝ վերջ տալ, բայց ի՞նչպէս, ուղղակի խօսիլ Գէորգին, ատի պատշաճ չ'էր, ու մտածեց մտածեց Յարեթիկ աղան երեք քառորդի չափ մտածեց, մինչև որ ոտք ելաւ ձեռքերը չփելով, ժպտելով ինքիրեն ու վաճառատան պաշտօնեաները զարմացան թէ իրենց տէրը ինչու այդքան զուարթ էր այդ օրը։*

*Զուարթ էր, այ՛ո, որովհետև իր որդին Էլսիի ճանկերէն կորզելու միջոցը գտեր էր, այս է՝ միտքը դրեր էր ուղղակի երգչուհիին երթալ ու աղաչել անոր որ Գէորգը չ'ընդունի, ու նոյն իրկունը Յարեթիկ աղան գնաց։*

*Էլսի դաշնակին առջևն էր երբ ձայն մը լսեց ու դարձաւ իր աթոռակով։*

*— Բարի՛իրկուն, Մատմազել։*

*— Բարիրիկուն, ո՞վ էք, պարոն, ի՞նչ կ'ուզէք։*

*— Անուշնս Յարեթիկ Տիրատուր է . . . ձեզմէ շնորհ մը խնդրելու եկայ։*

*Էլսի չարժուեմ մ'ըրաւ, անկատար Ֆրանսերէն մը կը խօսէին երկուքն ալ։*

— Ի՞նչ կրնամ ընել ձեզի համար, լսաւ ըսի։

— Տղաս Գէորգը կը ճանչնա՞ք։

— Գէորգ . . . Գէորգ, Գէորգ, յարեց ըսի մտածել կեղծերով, երկար հասակով, առանց պեխի . . .

— Այ՛ո, այ՛ո, ընդմիջեց Յարեթիկ աղան, անհամբեր, ան որ գրեթէ ամեն օր հոս է։

— Ո՞վ կ'ըսէ ձեզի թէ ամեն օր հոս է, պարոն, վրայ բերաւ ըսի նեղացած։

— Ես, մատմազել, ասնօգուտ է պահելը ու ձեզի աղաչելու եկայ որ դինքը ասկից ետքը չընդունիք։

— Բա՛հ . . . ըրաւ երդչուհին, ատի իմ գիտնալիք բանս չէ։

**ՄԻՀՐԱՆ ՎԱՐՊԵՏԵԱՆ**

(Մնացեալը յաջորդ թուով)

---

## ՄԻՍԻ ՎՐԱՅ ԿԱՐԵՒՈՐ ԳԻՏԵԼԻՔ

2· Մէկը ըղձելով պահել— Այս միջոցը տաք կլիմաներու և գաւառներու մէջ առ հասարակ չատ գործածական է· մեր գիւղացիք միսը, ոսկորները, տոտիկները այս կերպով երկար ատեն պահելով ի հարկին թարմ միսի տեղ կը գործածեն։ Միսին չրատ մասը հանելու, նեխման ու խմորման առաջքը առնելու և միսին նեարդները սեղմելու մէկ հատիկ միջոց մըն է· այս կերպով միսը չորցնելու համար մեծ ատիաճ կատերու վերածելով ծուծը ցամքեցնելու համար վրան եղիպտացորենի ալիւր կը ցանեն և արևին տակ կը չորցնեն. և կամ նախապէս լաւ աղելէ յետոյ արևին կը չորցնեն, այս կերպը մեր գաւառացիք կը գործադրեն։ Չորցած միսը չատ աննպարար է, բայց ոչ համ և ոչ հոտ ունի, դժուար կը ծամուի և դժուար կը մարսուի, այսու հանդերձ կանանչեղէնով եփելով բաւական ախորժելի համ մը կուտայ։

3· Միսուած և աղած մը — Հոտաւէտ կանանչ միայտերու՝ եղևնախոտի և արտուճի՝ մուխով նախապէս քիչ մը աղած միսը կը չորցնեն· եղի և մանաւանդ խոզի միսին համար այս եղանակը Ամերիկայ չատ կը գործածեն, որով կունենանք Համպուրկի ծխուած միսը և Նիւ-Եորքի ժամկոնը որ համով ու սքանչելի են, բայց բաւական դժուարամարս։

Մխոցը աղելով պահելու սովորութիւնը շատ հին է. կենդանին սպանուելէն անմիջապէս վերջը ոսկորները հանելով և շաճ օգտանոց կտորներու վերածելով 1–2 սանթիմէթր թանձրութեամբ աղի խառով մը ծածկելու և տակառներու մէջ իրարու վրայ շարելու է. միսը իր կարմիր գոյնը պահելու համար աղին հետ քիչ մը բորակ ևս կը խառնեն։

Աղած միսը աղէկ կը դիմանայ, սակայն ծուծին հետ կը կորնչէ նաև իր սննդական յատկութեան մէկ մասը, մանաւանդ նուաղ համով և նուաղ մարսելի խիտ կարծր ու կաշիի պէս կըլլայ։

4. Հականէխական գործոններ — Հականէխիչ նիւթերու միջոցաւ մատրած են միսը երկար տուեն պահել, այս գործածուած նիւթերն են ածուխի փոշի, ասիտ ֆինիք, ծծմբային թթու, սալիսիլիքի թթու, ոսկի բորակ։ Այս միջոցներով պահուած միսը զանազան վտանգներ պատճառելով դրեթէ անգործածելի մնացած են։

5. Տափուրնէան գործողութիւն — Միսը քիչ մը եփելով օդը հանուած տուփերու մէջ կը դնեն, այս ամենաշատ միջոցը առաջին անգամ 1809 ին Ապեր երեւակայեց և իր անունով Ապէրնէան դրութիւնը կոչուեցաւ. յետոյ այս դրութիւնը զանազան անձերու կողմէ բարեփոխուելով Փաստիւրի, Մարթէն տը Լինեասի կատարելագործեալ դրութիւնները ծնունդ առին։ Այսպէս օդը ելած տուփերու մէջ փակուած միսերն անշուշտ լաւագոյն են. շատ երկար տարիներ անփոփոխ կը մնան. ուտելու համար շատ լաւ, խիտ սննդարար և բաւական մարսելի են։

Մխոյն բժշկութեան մէջ գործածութիւնը — Միսը մարդկային բնական սնունդն ըլլալէն զատ, քանի մը հիւանդութիւններու դէմ իբր դարման բժշկութեան մէջ ալ կարեւոր տեղ մը բռնած է. բժշկութեան մէջ միսը երեք ձեւի տակ կը գործածուի, հում, փոշիացած և եփած։ Հում միսը Բեթրզպուրգի վիրաւոր բժիշկին ձեռքով դարմանարանութեան մէջ մացուեցաւ. թոքախտի, մարսողական գործարաններու և ստամոքսի հիւանդութեանց մէջ մեծ ծառայութիւններ մատուցի։

Երեւելի բժիշկներ, ինչպէս Թրուսօ, Պուչիւ, Կրիզոլ և այլք զանազան հիւանդութիւններու մէջ հում միսէն օգուտներ քաղած են, սակայն Ռենէա և Ռիչըրն ըսուած ճմրիներուն հում միս ուտելէն յառաջ գալն ալ չ'են ուրանար։ Գաւառներու մէջ հում միս ուտելու սովորութիւնը տեղ տեղ տիրած է, մանա-

ւանդ Տիվրիկ, Մալաթիա, Տիգրանակերտ, Քարբերդ յօշած հուսմ միսը չերիած հաճարի (պուլկուր) հետ խառնելով մեծ ախորժանօք կուտեն որմէ կը դոյանայ ընդհանուր ըսուած (չերիտ) բուսական նեղիչ ճիճին. վերոյիշեալ դաւառներու ժողովուրդը այս ճիճին ունի, քիչ անգամ կը յաջողին ճշմարիտ դարման մը գտնել, ամենէն դիւրին միջոցը յօդուտ գաւառացի աղբայնոց ստորև կը նշանակենք զոր ամենայն ճշդութեամբ դործածելով այդ ախտէն կազատին, սակայն կը պարտաւորին յետայնու երբեք չուտել հուսմ միս, սուճուք, կէօտէն և պաստրմա։

Շեբէրէն դէմ ամենազդու դեղն է Քօֆէջ–մալ ըսուած բոյսը, որուն Եւրոպացին պատրաստի եկածն ամենայարմարն է, ամեն դեղարաններու մէջ կը ծախուի և երկար տարիներ չուրեղելով կրնայ պահուիլ, դեղարաններու մէջ այս դեղը հետևեալ անունով փնտռելու է Թոխում Եէրիէ երեբէ պը Քօֆէջ–մալ, Տօքթ. Ա.պրիճան, որուն տուփը 15 դրչ. է։

Այս տուփին մէջ 18 հատ սև հապեր կան, չափահաս և հուժկու կազմով անձերու համար 18 հատը բաւական է, իսկ 10 տարեկանէն վեր երախաներու և նիհար ու տկարակազմ անձերու համար 6էն 10 հատը կը բաւէ. ուրեմն այս չափերը հիւանդին տարիքին ու կազմին համեմատ տնօրինելու է։

Այս դեղը ուտելու համար հիւանդը օր մը առաջ բերանը բան չը դնելով անօթի մնալու է, հետևեալ առաւօտուն սկսելու է 10 վայրկեանը մի անգամ երկու հատ կուլ տալ, մինչև որ որոշեալ չափը լրանայ, այսինքն նիհար և տկարակազմներու և 10 տարեկանէն վեր տղաներու համար 6էն 12 հատ, իսկ չափահաս հուժկու անձերու համար 12էն 18 հատ. վերջին հապերը առնելէ 1–2 ժամ վերջը վիճակի ու կազմի համեմատ 5 տրամէն 15 տրամ հինգ եռչէ խմելու է, որ լուծում մը տալով չէրէջը կիյնայ. բայց ձեռքով քաշել մեռցնելէ զգուշանալու է։

Կարելի է նաև դեղատուններու մէջ հետևեալ դեղագիրը պատրաստել տալով նոյն կերպով դործածել։

Էֆէրէ էրեբէ պը Քօֆէջ մալ 6 կրամ.

Տիչիղ ան ֆոխում Նօ 18։

Մէնթ ֆուչն աւելի յարմար ըլլալով ընդարձակ դործածութիւն մը ստացած է։ 1881ին առաջին անգամ Տէպով բժիշկին միջոցաւ բժշկութեան մէջ մտցուեցաւ։ Միսի փոչիի պատրաստի դեղերն դեղատնութեան մէջ կարևոր տեղ մը բռնած են,

ինչպէս Քաթխյեօն, Թրուէթ և Բէրրէյի մսի փոշիները, քէքճօնը դեղերով մարսուած միսի փոշի մընէ, բժշկութեան մէջ չատ կը գործածուի Քաթխյեօնի, Շարմօլ, Տէ Ֆրէօնի բէրթօնները։

Զանազան կենդանիներու ճաշի վրայ մանաւանդ էքոնէյէ — Աստ հարկ կը տեսնենք ընդհանուր տեղեկութիւններէ զատ ոչխարի, եզի, հորթի, խոզի, միու, ձուկի և որսի միսերու վրայ մասնաւոր բացատրութիւն տալ։

1· Ոչխարի ճաշ — Ոչխարը ընտանի կենդանի մը ըլլալով եզի միսէն վերջը մեր աննդեան պիտանի պատուական կարմիր միսը կը համակարարէ. թէև եզի միսէն քիչ մը նուազ աննդարար, սակայն անկէ աւելի համով հոտով և աւելի դիւրամարս է։ Ամենէ չատ փնտռուած մասերն են ճուռը (պուտ), պառակը (քօթլէթ, պռզօլա) թիկունքը, ազդրը, կռնակը, զորս կասկարած կամ խորոված ուտելը հաճելի է։ Ուսը, կողի միսը, պռչը չատ չեն փնտռուիր, իւղոտ ըլլալուն դժուարամարս են։ Ուղեղը թէև քիչ աննդարար սակայն դիւրաւ կը մարսուի. տոտիկները զոր չատ փափկամաչակ անձեր խիստ աննդարար կը կարծեն, և, ի մեծ ցաւ իրենց սրտին, կըսենք թէ աննդարար յատկութիւնը չատ վար է, միայն մածիտ (ժէլաթին) ըսուած կպչուն նիւթ մը կը պարունակէ։

Ոչխարի միսը ուրիշ կենդանիներու բաղդատմամբ չեչ ըսուած մխիթին սերմերը աւելի չատ կը պարունակէ, ուրեմն պէտք է զգուշանալ գունատ, թուլ, դիւրափչուր, թթու ջրով թրջուած, բջիջային հիւսուածքով, թուլցած իւղով և անհամատատ ծուծով միսերէն, և ոչխարի միս գնուած միջոցին միշտ հարկ է յիշել հետևեալ դիտողութիւնները։ (Ոչխարի ինչպէս նաև եզի լաւ միսին երկու երեսը պէտք է զանազան թանձրութեամբ իւղի խաւով մը ծածկուած ըլլայ, այս իւղը, մանաւանդ ներսի լիինը և երիկամներունը պէտք է ճերմակ և խիտ ըլլայ· միսը պէտք է կարծր, կարմիր, նուրբ և խիտ հատիկներով ծածկուած ըլլայ· կորուած միջոցին պէտք չէ որ ջրոտի)։

2· Եզի ճաշ — Մեր աննդեան համար համով հոտով և ամենէն աննդարար միսը եզը կը մատակարարէ։ Զարաչար աչխատցուած կենդանիին միսը լաւ չէ, ըստ Պ· Չիւսօնի և Տը Թուլի ասէր լաթնէ ըսուած նիւթով բեռնաւորուելով, յարմար ջերմութեան մը ազդեցութեան տակ իսկոյն արուեստական մարսողութիւն մը յառաջ կուգայ և որ միսին հաստատուն երևոյթը փոխելով ապականիչ խմորում մը և հետևարար անախորժելի հոտ մը կ'ստանայ։

Ցարմար ժամանակ պարարտացած եզի միսին լայնքին կտրուած կտորը հաւասարակշռ կաւկարմիր գոյն մը, թանձրախիտ սպիտակ ծառանման գիծեր, և շատ խիտ ու շատ նուրբ ծակոտիքով ճմարիտ հիւսուածք մը կը ներկայացնէ, եթէ իւղին խաւը շատ ըլլայ, միսին ապնիւ տեսակ ըլլալը կը ցուցնէ, բայց պէտք է նաև որ կարծր, սպիտակագոյն կամ թեթևակի դեղնկնկ ըլլայ։ Շատ պարարտ եզին միսը աւելի սննդարար նիւթեր կը պարունակէ. ըստ Բրօֆէսօր Հէնրի Պուլիի և Նօքարի՝ պարարտ եզին միսը 100ին 40 ջուր միայն կը պարունակէ, մինչդեռ նիհար եզի միսը 100ին մինչև 77 ջուր կ'ունենայ։ Եզի միսին փնտռելիք առաջին մասերն են, երաստանը, մէջքը և բոլոր թանձր ու իւղապատ միսերը։ Երկրորդ մասերն են ուսը, կուրծքը և կողի միսերը, ասոնք առաջիններէն վար են։ Երրորդ կարգի մասերն են սպրանոցը, այտերը, կողի միսերը, կարճը և պոչը. այս մասերը վերի երկու կարգի միսերէն քիչ սննդարար են։

Յ. Հորթի միս — Մեր սննդեան մեծագոյն մասը կը կազմէ նաև հորթի միսը, միայն Փարիզի մէջ տարին 12 միլիոն քիլօ հորթի միս կ'սպառի։ Ըստ Մօլէշօթի փորձերուն՝ 100 մաս հորթի միսը 16, 63 սննդարար նիւթ կը պարունակէ, եզի միսէն քիչ մը նուազ սննդարար ըսել է։ Պ. Թէսիէի գաղափարով մէկ ամսուան հորթին միսը լաւագոյն է, ընդհանրապէս վեց շաբթուանէն մինչ երեք ամսուանը կը փնտռուի, մէկ ամսուանէն վար եղածը պրեթէ միս չէ։ Հորթին միսը իր համին փափկութեանը համար կը փնտռուի, թեթև լուծում կուտայ, կաստկարածը և խորովածը աւելի լաւ կը մարսուին. լեարդը և երիկամը շատ սննդարար են, բայց քիչ մը դժուարամարս։ Ուղեղը շատ դիւրամարս է և կը պարունակէ առնական զօրութիւնը բազմապատկող ֆոսֆոր ըսուած նիւթը։

(Շարունակելի)
Երիզ

ՏՕՔԹ. ՓԱՇԱԵԱՆ

## ԿԸ ՄՏԱԾԵՄ

Մերթ կը մտածեմ տամուկ այն փոսին
Ուր դիակս օր մը պիտի բառայեն
Ուր պիտ՝ վերջանան երազներն իմ սին
Մաղուելով յացող մաճուառ խառարեն։

* * *

Ես կը մտածեմ այն մարմիններուն
Որք նիմա պառկին անյարի՛ր այնտեղ,
Երբ վերը նովեր նեծեն երերուն
Շոճոյն մէջ մաճուառ նեծկլտանքն աներեղ։

Օհ՛, մեռելները որոնք կերբան նող
Իրենց սիրածներն բողլով վշտաճար
Դիակին շարժմամբ կը գործեն տենդոտ
Անգութ մայր տարրին միանալով յար . . . ։

Ես կը մտածեմ բիւր, բիւր որդերուն
Որք կըրծեն ատիճքն կնոջ մ'վաղամեռ,
Որ իրմէ առաջ շատեր տուաւ նողուն,
— Ձիճքը պաշտողներ . . . նոս նէ ունի դեռ։

Ու կը մըտածեմ շուշան մարմնիկին
Կոյսի մ'որ սիրեց ու մեռաւ երկ
Որուն չիլար վրան այն որ անմեկին
Ըլլալ խոստացաւ իրեն, աղջիկ նէ՛ր։

Ո՛ւր, բերեաս նո՛ն սիրոյ զոհեր կան
Որք արցունքի մը կսպասեն աւա՛ղ
Որ չի գար բրջել նողը շիրմական
Մաճուառ նրճուանքին տալով սարսուռը պաղ . . . ։

* * *

Եւ կը մտածեմ տամուկ այն փոսին
Ուր դիակս օր մը պիտի բառայեն,
Ուր պիտ՝ վերջանան երազներն իմ սին
Մաղուելով յացող մաճուառ խառարեն . . . ։

# ԻՄ ՄԱՆԿԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՍ

## ԻԳ

Իմ բարի վարքս և ջանասիրութիւնս որք առանց անապարճութեան՝ ստուգիւ անսագիւտ էին, ինչպէս իմ ամէն վարժապետներու՝ նոյնպէս և Անդրէասի խիստ սիրելի ըրած էին զիս, Ձեմ յիշեր թէ որ և է պատիժ, խրատ կամ նոյն իսկ դիտողութեան առիթ տուած ըլլամ իրեն։ Բացառիկ պարագայի մը մէջ սակայն հնօրեայ տեսչին դժգոհութեան նշաւակ եղայ, այլ այդ պատահական դժբաղդութեան մէջ, անոր չնորհն ու ներողամտութիւնը վայելելու բաղդն ունեցայ իբր առանձնաչնորհեալ սան մը։

Կը յիշեն բոլոր աշակերտք թէ ո՛րքան խիստ էր Անդրէաս լռութեան մասին՝ զոր խանգարողները յետին աստիճան կը զայրացնէին զինք։ Լռութիւնը չէ թէ միայն ուշադիր սերտողութեան և յառաջդիմութեան կարևոր պայման մ՚էր այլ նաև անձնական արժանապատուութեան խնդիր մը։ Որքան անտգիւտ ըլլար այն և բացարձակ՝ այնքան անժխտելի հաւաստիք կ՚ստանար իր ազդեցութեան և աչակերտաց հնազանդութեան մասին։ Գիտէի զայս և երկիւղածութեամբ կը պահէի այդ կանոնը, թէև լեզուագարութիւնն իմ սիրական մեղքերէս մէկն եղած ըլլայ իրենէ։

Ի պահանջել հարկի ազդային դիւանադպրի պաշտօն կը վարէր Անդրէաս։ Հին աւեններ ինչ որ հիմայ դիւանատուն կը կոչենք նախնական ամենապարզ վիճակ մ՚ունէր մեր բարի քաղքի մէջ և ազգին հաշիւները խառն ի խուռն բռնող պարզ գրագիր մը միայն կար հոն։ Այդ ժամանակներն առ հասարակ խոբա անուամբ կը ճանչցուէր այդ պաշտօնատունն՝ որ չուկայի մէջ կը գտնուէր իշխան ազգից դիւրութեան համար, ուր ասոնք իրենց արտաքոյ կարգի նիստերը կը կազմէին մինչև Պատրիարքարանի օրէնքի հաստատութիւնը՝ որ իրաց վիճակը փոխեց՝ խոբան Դիւանատուն անուամբ մկրտելով և զայն հաստատուն կերպիւ Ադաչնորդարան փոխադրելով։ Այդ թուականէն ազգին մէջ սկսած էր լսուիլ դիւանատուն, դիւանապետ, դիւրանադպիր բառերը, երեք նոր անուանակոչութիւնք որք հին նախնական վիճակէ աւելի ղարդացեալ՝ կարգաւորեալ

և բտրեփոխեալ բանի մը գալափարը կը կրեն արդէն իրենց մէջ։

Իր գեղեցիկ դրարտառով՝ (այն ժամանակի պաշտօնական պարտաւորեալ լեզուն) իշխաններու ժողովքին դրաւոր յարաբերութիւնները կը պահէր ուրեմն Անդրէաս, չէ թէ միայն թեւերու՝ այլ նաև՝ մանաւանդ Պօլսոյ Հոգևոր և Դերագոյն ժողովներու (հիմակուան լեզուով քաղաքական և կրօնական ժողով) կամ մասնաւոր Ա.միրաներու հետ, և այս փափուկ գործն աշակերտաց լուսթեան ժամանակ կը կատարէր։ * Որքան կընճռոտ ըլլար չարադրելի նամակին նիւթը՝ ա՛նքան և խիստ կ'ըլլար ահեղ տեսչին արձակած հրամանը։ « Տղաք, կը պտռար որոտագին ձայնով, գիր ունիմ, լուսթիւն պահեցէ՛ք։ խօսողները խստիւ պիտի պատժեմ, » ակնարկելով ֆալախան որ նոյն օրը սովորականէ աւելի գործ կը տեսնէր։ Արդ էն ամեն անգամ երկիւղածօրէն կը կատարուէր այդ հրամանը, ո՛ւր մնաց յատկապէս սպառնալից պարագաներու մէջ։ Անդրէաս վարժապետ սովոր էր այսպիսի առիթներու մէջ գլխաւոր աշակերտներէ մէկը գաղտնի կառավարիչ կարգել, հեռուանց նշանաց ապսպրելով անոր կատարել այդ կարևոր պաշտօնը։ Ո՛չ ոք կրնար գիտնալ թէ ո՞վ էր վարժապետին գաղտնի գործակալն որ անորմէ զգուշանար մասնաւոր կերպիւ, ամէն ոք իր քովի ընկերէն իսկ կը կասկածէր։ **

Այսպիսի փափուկ օր ա՛ահա իմ սև բաղդս չարաբաստ

---

* Ամիրայից (մասնաւորապէս խորասանցիներուն) գրուած նամակներու շարի մ'ունցաւ ձեռքերնիս՝ որ հետևեալ ձևերու տակ ուղղուած են առ որ անկ էր։ Մեծաշուք Տէր . . . Շնաշխարհիկ պարծանիք Հայկեան։ Մեծարգի Տէր, պարծանիք Արամեանց Տան։ Քրիստոսազօր ամիրայ, Անզոյգ երախտագործ մեր, Մեծայարգ Տէր, Ղեղոց մխիթարիչ։ Ներսէս կաթողիկոսի նամակ մը կայ այսպէս ուղղուած։ Սրբազնատուրք Հայր, պատկ պարծանաց Ազգիս Թորգոմեան։

** Հին առիթները յայտնապէս կը կարգադրէ կառավարիչն՝ որ կաթոլիկամուրեան ուսուցուցիչները բարձրաձայն կ'ուսուցանէր այս պարագայի յատուկ տեսակ մը պայման եղանակով։ Եղբայր Յակո՛բն է, Եղբայր Գրիգո՛րն է, Եղբայր Մարկո՛ն է եւ այլն։ Ասանիկ կը պարտաւորէին վարժապետի բով երթալ եւ մէկ գծի վրայ շարուիլ, ապահովելով սիրտ ի բունէ իրենց անօրինութիւնի պատժին։ Խորունկ լռութեան մը միջոցին պահ առ պահ կրկնուող այս ձայ-

դիպուածով մը կրցայ դիտել — երանի՛ թէ դիտած չըլլայի — որ ա՛յնպիսի մէկու մը յանձնուեցաւ այս պաշտօնն՝ որ իմ անմիջական դրացիս, բարեկամս ու մտերիմս էր, իմ հին բարի դրացուդս՝ Պօղոս վարժապետին որդին, Եկեղեցի ընկերու բարոյական ապահովութիւնս կատարեալ էր թէ դրացիս՝ մտերիմս չպիտի ձեռք տար դիս՝ Ո՛վ կը վախնար ուրեմն նոյն օրը շաղակրատելէ, կեցցէ՛ չատ խօսուքիւն, Հեռւապէս արձակ ընթացք մը կուտամ լեզուազարութեանս՝ համը հոտը ստուգիւ փախցնելու չափ։ Իզուր կառավարիչն աչքը կը հեռացնէ վրայէս, ամէն անգամ իմ կողմս նայելուն՝ դիս կը գտնէ անվուսպ շաղակրատութեան մէջ և . . . հուսկ ուրեմն արդարութեան հարկ կը դատի իմ կոյս անունս նշանակել իր պատրաստած ցուցակի վրայ՝ առանց դէթ իմ անակնկալ դժբաղդութիւնս ծանուցանելու ինձ։ Լուրեան աւարտած պահուն ցուցակը կը յանձնուի Անդրէաս վարժապետի՝ որ բարկացայտ և սպառնալից նայուածք մը կը ձգէ անոր վրայ։ Ամէն աշակերտի սիրտ ի թուենդ է, արդեօք իր անունը կը գտնուէ՞ր չարաշուք թուղթին մէջ։ Այլ սակայն զարմանալի՛ բան, ահարկու դաստիարակին իր հուժկու ձայնով այս անգամ յանցաւորները չ'կանչեր իրենց ծանր պատիժը կրելու։ Միթէ կը ներէ՞ Անդրէաս յանդուգն օրինազանցներու, այլ միթէ կարելի է այս. այսպիսի անյիշաչարութիւնկամ ներողամտութիւն կրնա՞ր սպատիլ իրմէ, երբ մանաւանդ յատուկ ու մասնաւոր սպառնալիք ալ կար այն օր։ Այո՛, կարելի է, քանի որ որոտընդոստան Արամազդ կը հրամայէ դասարան ելնելու, ստոյգ է թէ թերասքօղ սրտմտութեան մը երկիւղալի չեշտովն Արդեօք դասարանէն ելնելո՞ւն պիտի դարձադրուէր դաւադանի պատիժը, ինչ որ անսովորական նորութիւն մ'եղած պիտի ըլլար։ — Այլ ո՛չ. աշակերտք անդորրիկ կ'արձակուին կէսօրուան ճաշուն. Փալախան վարժապետի բազմոցին տակ կը մնայ միշտ տնչարժ . . . ։

Ըրն անհանգիստ կ'ընէր մտաւոյզ վարժապետն իր գրասեղանին վրայ, մանաւանդ որ անոր անհանգստութեանց մէջ, մանաւանդ որ անոր անհանգստութեանց մէջ, մանաւանդ որ անոր անհանգստութեանց մէջ

Սովոր էի ճաշէ անմիջապէս վերջը՝ և նոյն իսկ կանոնական ժամէ յառաջ դպրոց վերադառնալ, ուր հետզհետէ կուգային կը հաւաքէին աշակերտք։ Այն միջոցին ազատ էինք խօսելու։ Նոյն օրն անսովոր կերպիւ կանուխ կուգայ Անդրէաս՝ խոժոռ և զայրագին։ Մտքէս իսկ չանցնիր թէ իր բարկութեան պատճառն ես եղած ըլլամ։ Կը նստի տեղը, մուխքաչը կը լեցնէ։ «Ծ՛օ կրակ մը բերէք։» Անողոք դաստիարակի «գանկի տակ փոմորիկ մը» կը նշմարուէր ակնթերև . . . ։

Անօրինակ ուժգնութեամբ կը քաշէ նա իր մուխն՝ որ գըլխուն վերևը խոշոր ու սև սև ամպեր կը ձևացնէր բարդ ի բարդ և յանկարծ խիստ շեշտով մ՛որուն սորված չէի երբէք իր կողմէ, «Մեսրո՛պ, հոս եկո՛ւր» կը պոռայ։ Իր քով կ՛երթամ անկաս-կած։ «Տղա՛ս, այս առտու լռութեան առեն խօսեցա՞ր։» Ոտքս ջուրը կը հասնի՝ ինչպէս կ՛ըսեն. — Ո՛չ վարժապետ. — Այո՛, խօսեր ես, անունդ նշանակուած է ցուցակին մէջ։ Բանը կատարելապէս կը հասկնամ, բարեկամս անհաճոյ անակնկալ մը պատրաստած էր ինծի։ Ուրանալ այլևս չէր կարելի։ — Վարժապետ, Արտաշէսին (Տէր Գասպարեան) բառարանն ուզեցի, կ՛երևի թէ նոյն միջոցին անունս նշանակուեր էր։ — «Նայէ՛, տղաս, ըսաւ Անդրէաս վարժապետ, բարձին տակէն ցուցակն հանելով ու պարզելով իմ առջև, տասն և մէկ հոգի նշանակուած են հոս, որոնց այս անգամ ներեցի քեզ չպատժելու համար, ուրիշ անգամ այսպիսի յանցանքի մէջ չգտնուիս։» — Լեզուս կապուած էր։ Վարժապետին քովէն հեռացայ փառք տալով Աստուծոյ որ ա՛յքան աժան ու անձայն կ՛ազատէի այս անակնկալ փորձանքէն, սակայն գործը հոս չմնաց։ Այս գաղտնի խրատով՝ որ ամենածանր պատիժի մը ներգործութիւնն ըրած էր վրաս, դադրած չէր ահեղ վարժապետին բարկութիւնը։ Հազիւ տասը քայլ չափ հեռացած իրմէ՝ — «Ուրիշ անգամ չընես, չարաչար կը պատժեմ հա՛,» պոռաց ետևէս՝ նոյն ժամուն դպրոցին մէջ գտնուող տասն-տասն հինգ աշակերտներէ լսուելու չափ բարձր ձայնով մը։ Զէր ուզած որ ատոցած բարոյական պատիժս անցնի բոլորովին անձայն և անշշուկ։ Խորասէն զգածուած էի, և երդուընայ մտովի իմ կարգ ապահ աւանդութեանցս միշտ հաւատարիմ՝ լռութիւնն այլ ևս չխանգարել նաև երբ գաղտնի վերատեսուչն ղրացի և ամենամտերիմ ընկեր մ՛իսկ ըլլայ . . . ։

(Շարունակելի) **ՄԵՍՐՈՊ ՆՈՒՊԱՐԵԱՆ**

# ՎԻՃԱԿ

## ԱԶԳ. ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ ԶՄԻՒՌՆԻՈՅ *

## 1893

Տեղւոյս Առաջնորդ Գեր. Ներսէս Հայր սուրբի միջոցաւ ազգային երկսեռ վարժարանաց տեսչութեան հրաւիրուելով՝ Հոկտ. 25ին դործօս դլուխն անցայ։ Այն օրուընէ սկսայ ինձ յանձնուած դպրոցներու ընդհանուր կազմութիւնը ուսումնասիրել, այսինքն ծանօթանալ անոնց ուսման ծրագրի, հաստատուած բարոյականի կանոններուն, աշակերտաց ընդհանուր վարմանց ու քաղաքավարութեան, անոնց ազգի զարնող առանձնայատկութեանց, որոնք կրնան Զմիւռնիոյ Ազգ. դպրոցներու միւս դպրոցներէ տարբերութիւնը ցուցնել, և որոնք անշուշտ տեղական հանդամանաց արդիւնք են, նոյնպէս արդէն դաստիարակութեան ակօսած ուսուցչական խմբի դաստիարակութեան եղանակին . . . ։

Երկու շաբաթ ժամանակամիջոցը հարկաւ շատ քիչ է դպրոց մը ուսումնասիրելու իր ամբողջութեամբ ու մանրամասնութեամբ, ուստի այս տեղեկագիրս սխալներ և շատ թերութիւններ կունենայ՝ եթէ ես ուզէի մանրամասն տեղեկագիր պատրաստելու աշխատիլ և այս երկու շաբաթուան եղրակացութիւնս ընդհանրացնել։ Դպրոցներու վերաբերումը նոր էր, աշակերտք դեռ դաստիրքներ չունէին, անցեալ տարուան սորվածին, բնական է, որ՝ մտքերնուն մէջ արդէն աղօտացած ըլլար կամ դուցէ մոռցուած բոլորովին, որովհետև այս տարուան արձակուրդները հիւանդութեան պատճառով երկու ամիս տևելի երկարեցան, և տեսչի ու ուսումնասիրդի փոխուելուն պատճառով՝ դպրոցական պիտոյից հոգացումը թերի էր մնացած, զորս ես կարգադրեցի առաջի շաբաթ. և դեռ ևս մինչև ցայսօր հայերէնի դասագրքեր չենք կրցած տալ տղոցդ ձեռքը։ Հարկաւ այս բոլորը թէ՛ աշխատութեանց և թէ՛ կարգապահութեան վրայ շատ մեծ ազդեցութիւն կ'ընէ. երբ տղան դպրոց դայ սորվելու և անոր ձեռքը գիրք չտանք ու դպրոցական աշխատութիւնները շաբաթներով թեթև անցնինք, տղան յոռի ուղղութիւն մը կ'առնու։ Այո է դուցէ և պատճառներէ մէկը, օրք Մեսրոպեան վարժարանի տղայքը չափէ աւելի անուռակ կը ցուցնեն, թէև անցեալ տարուան համար ալ շատ բարձր վկայութիւնները կը պակսին։

Այժմ կուգամ մէկ մէկ թուելու դպրոցներու ներքինը, երկու ղպրոցներուընը առանձին առանձին յեշատակելով։

Ըստ ծրագրի Մեսրոպեան վարժարանը ունի ինն դասարան եօթ ուսումնարանական և երկու դպրոցական. Հռիփսիմեան վարժարանը՝ նոյն

---

* Պատ. Ուսումն. Խորհուրդն ուղղած է մեզ՝ Տեսչութեան սոյն Տեղեկագիրն ի հրատարակութիւն։ Ծ. Խ.

ծրագրով ունի վեց ուսումնարանական դասարան և այս տարի՝ մեկ դըպրոցական, յորս կան 299 աշակերտ և 188 աշակերտուհի։ *

Եթե քննենք վերոյիշեալ երկու ցուցակները, կը տեսնենք որ Մեսրոպեան վարժարանի Ե. Գ. Դ. Ե. դասարանները բազմաթիւ աշակերտներ ունին և բաժնուելու ու ղեկդնեցուներ ունենալու անհրաժեշտութեան մէջ են, որոց համար առ նուազն երեք նոր ուսուցիչ պէտք է։ Ասկէ զատ, եթե վերակացութեան պաշտօն ունեցող ուսուցչաց պարապ ժամերն ու ղեկդնեցուներու դաս չունեցած պարապ ժամերը համեմատելու ըլլանք 10 էն աւելի ժամեր կունենանք, յորում այս կամ այն դասարանը առանց վերակացուական անմիջական հսկողութեան պիտի մնայ, մինչդեռ նոյն իսկ շատ բարեկարգ դպրոցի մը մէջ ամբողջ ժամ մը առանց անմիջական հսկողութեան թողուլը դէշ հետևանք կարող է ունենալ, ուստի այդ ժամերն ալ հսկող մ'ունենալ անհրաժեշտ է, մանաւանդ եթե ղեկդնեցուհոց դասարաններ ալ ունենանք, պարապ ժամերու թիւը աւելի ևս պիտի շատնայ։ Հնիփսիմեան վարժարանի մէջ անմիջական հսկողութիւն չեղող ժամերու թիւը աւելի ևս շատ է։ Մեր ուսուցիչներէն այդ պակասը լրացնել չենք կրնար, որովհետև համարեա բոլորն ալ չափէն աւելի դասեր ունին, այնպես որ մինչև անգամ աշակերտաց գրաւոր աշխատութեանց կանոնաւորութեանց և անոնց խնամեալ սրբագրութեան շատ ծանրանալ չեմ կրնար, ինչպես կը փափաքէի։ Ասով չեմ ուզեր ուսուցչաց աշխատութեան վրայ կասկած յայտնել, այլ թե որքան ալ բարի ցանկութիւն ունենան՝ չեն կրնար հասնիլ, գոնե շատ պիտի չտապին։

Իսկ դասերուն շատ ըլլալուն պատճառը թոշակներու համար ընդունուած դրութիւնն է գլխաւորապէս, որ դպրոցին օգտակար անօրինութիւն չէ։ շատ դասեր ունենալը մանկավարժական ալ չէ։ եթե ուսուցիչներու մեծագոյն մասը շատ դասեր չունենային՝ այն ժամանակ կրնային դպրոցները «կենդրոնական ուսումնական խորհրդի» կազմական կանոնագրի» համաձայն դասարանական դրութեան վերածել, և տարով թե՛ ուսուցչաց և աշակերտաց աշխատութիւնները, թե՛ վերակացուաց հսկողութիւնը և թե՛ ընդհանուր բարեկարգութիւնը շատ աւելի արդիւնաւոր դրութեան սահմանի մէջ կը մտնէր։

Ըսի արդէն՝ որ երկու շաբաթ ժամանակը դպրոց մը ճանչնալու, այն ալ դպրոցները նոր բացուած ժամանակ, շատ քիչ է հարկաւ ծանօթութիւն անուանելու անգամ։ Բայց կան բաներ՝ որ նոյն իսկ առաջին անգամէն աչքի կը զարնէ։ Մեսրոպեան վարժարանի վարի չորս դասարանները, այսինքն տարրական նախակրթարանի դասարանները անհնար՝ վիճակ ունին ուսման մէջ, մանաւանդ առաջին և երկրորդ դասարանները, այս տարի միայն չէ եղեր, այլ գոնե անցեալ տարի ալ այդպէս է եղեր։ Դպրոցի և

---

* Զանց կ'առնենք հրատարակել հետաքրքրութեան համար Տէր-Էլի-Էրէ այն մասն որ կ'պարունակէ այլ եւ այլ ցուցակներ՝ յաչտարտաղ ծրի եւ թոշակաւոր ուսանողներու եւ ուսուցիչներու թիւն, դասատուութեան եւ մէկ մի առարկայի համար որոշուած ժամերը. մէկ մի դասատուի առանձնաձ դասերն եւ այլն։ Ծ. խ.

ուսման հիմքն է այդ դասարանները։ պահենք անպատճառ զօրացնելու է, որովհետև վերի դասարաններու արագ և արդիւնաւոր ընթացքը առաջին տարիներու լաւ պատրաստուած ըլլալէն է կախուած։ Նոյնը կրնամ ըսել նաև Հռիփսիմեան վարժարանի համար, թէև Հռիփս. վարժարանը քիչ մը ագէկ է Մեսրոպեանէն, այն ալ ոչ թէ պարապմանց մէջ աշակերտուհեաց բնաւորութեան բերմամբ։ Գալով միւս դասարաններուն, ըստ իս մայրենի լեզուի ու թուաբանութեան ուսումը զօրացնելու շատ պէտք ունինք։ Հայկերէնի ուսումը թոյլ ըլլալ կենթադրեմ գործածուած դասագրքէն — Մայրենի լեզու — որ նիւթի կողմանէ հարուստ է, բայց իր բացարձակ դասագիրքը լեզու սորվելու անպէտք, լեզուի համար՝ սխալներ կարելի է սորվիլ անկէ և ոչ թէ կանոններ։ Թուաբանութիւնը թոյլ տեսայ համարեա բոլոր դասարաններու թուաբանութեան դասերուն ներկայ լինելովս. տարուան սկիզբը բնական է որ թուլութիւն ըլլայ, բայց իմ նկատած թուլութիւնս հիմնական մէջ էր. թուաբանութիւնը տրամաբանական գիտութիւն չէ մեր դպրոցի մէջ։ Հռիփս. վարժարանի թուաբանութեան դասաւանդութեան մասին նշանը կ'ըսեմ՝ կարծիքս աւելի վերապահելով, որովհետև այս երկու շաբաթուան մէջ պէտք եղածին չափ չկրցայ ներկայ գտնուիլ Հռիփսիմեան վարժարանի դասերուն։

Կեդրոնական Ուսումնական Խորհրդի կազմական ծրագրի համաձայն կազմուելու «ուսման մանրամասն ծրագրի» ընդհանուր դիներուն լաւ ծանօթ եմ. մեր ծրագիրը հիմնական մեծ տարբերութիւն չունի անկէ. միայն ինչպէս, այն նայնպէս և՝ այս ծրագրի գործածութեան մէջ է խնդիրը. եթէ մենք կարող ըլլանք մեր ծրագրի տրամադրութիւնը ճշտիւ գործադրել, մեծ արդիւնք կ'ունենանք, և դպրոցը իրապէս բարեկարգ կ'ըլլայ. բայց կը պակսի այդ գործադրութիւնը ու մեր այժմեան դժուարք վերն է . . . ։

Մենք արդէն ուսումը սկսեր ենք անցեալ տարիներու ծրագրով ու կարգադրութիւններով. քանի որ ժամանակնիս ալ արդէն շատ քիչ է՝ ըզգալի փոփոխութիւններ ծրագրի մէջ ոչ մեկ արդիւնք չկրնար ունենալ. ուստի, ըստիս, եթէ աչալուրջ հսկողութեամբ և ջանքով՝ անհրաժեշտ և թեթև փոփոխութիւններով արդէն անցեալ տարիները գոյութիւն ունեցող այս դրութիւնը շարունակինք, շատ աւելի օգուտ կ'ունենանք դպրոցներու համար քան թէ փոփոխութեանց ձեռնարկելով։ Ծրագիր մը միշտ պէտք ունի ի գործնականին մշակուելու և կատարելագործուելու. հաստատուն ծրագիրները միշտ ապարդիւն կ'մնան. այս տարուան մեր փորձառութիւնը դպրոցի ուսումնասիրութեան մէջ՝ անպատճառ բան մը աւելցնելու է իւրմիրի դպրոցներու ծրագրի վրայ՝ զայն աւելի ևս գործնականի մօտեցնելու. ինչպէս և հետևեալ տարիներունն ալ՝ այդ տարիներու համար։

Մեսրոպեան վարժարանի նախակրթարանի մասը՝ եօթը դասարաններու է բաժնուած. իսկ դասընթացը բարձրագոյն նախակրթարանի է, ունի նաև երկու դպրոցական դասարաններ, վճռաւականական և գրականական ճիւղերու ծրագրով։ Նոյն ծրագիրը Հռիփսիմեան վարժարանի մէջ վեց դասարաններու է բաժնուած, որ բաց ի այդ ունի նաև երկու մանկագիտական դասարան (այս տարի միայն մեկ դասարան ունի) մանկավարժական և գրագիտական ծրագրով։ Նախակրթարանները 6 կամ 7 դասարանի է բաժնուած՝ ենթադրելով որ 6 տարեկան դպրոց ընդունուելով մինչև 13-14 տարեկան դպրոցը պիտի ձգան։

Ծրագրի՝ տեղական հանդամանաց համաձայն՝ նպատակայարմար և գործնական ըլլալու քննութեանց չեմ կրնար մտնել, քանի որ տեղւոյս հանդամանքները չեմ գիտեր, որով իմ քննութիւններս ալ տեսական կը լինին և ոչ գործնական, ուստի այդ կը թողում ամբողջ տարին ուսումնասիրելէ ետքը կատարել։

Ծրագիրը ի նկատի ունի աշակերտաց 13-14 տարեկան հասակի մէջ դպրոցն եղնելին. բայց մեր աշակերտաց ցուցակը կը յայտնէ որ անոնց կէսը և աւելին դեռ՝ տղքատ ծնողաց զաւակ են. ուստի անոնց ծնօղքը օր առաջ իրենց զաւակները իրենց ընտանեաց համար աշխատող ձեռքեր ընելու կը փափաքին, ուստի այդ տարիքին սպասել չեն կրնար, այլ անկէ առաջ կ'առնեն դպրոցէ, այդ պատճառով ալ եթէ նորընտիր Պատ. Ընսուսնական խորհուրդը Մեսրոպեան վարժարանին կից՝ առ այժմ շատ փոքրիկ ծրագրով՝ արհեստանոց մը բանալ յաջղէ, ինչպես որ մտածիր է, թէ՛ ծնօղքը և թէ՛ աղայքը աւելի կը կապէ դպրոցի հետ, միևնոյն ժամանակ ալ գործնականապէս շատ ալ օգտակար կ'ըլլայ հասարակութեան, օտար դպրոցներու հետ մրցումէ ալ բարձր կը մնայ միշտ, և գուցե առով քանի մը՝ դպրոցին ապարդիւն և ինքնասկար կարգադրութեանց ալ, օրինակ՝ ան ժամանակ ընդունելութեան և լեզուներու դասաւանդութեան համար ընդունուած սովորութիւնը, առջևը կառնուի։ Նոյնպէս ալ օգտակար կ'ըլլայ նաև Հռիփսիմեան վարժարանի մէջ քանի մը կանացի արհեստներ մտցնել, օրինակ՝ կօր, ձև, արդիլ և այլն։

Տէսոյ Ա.Ե.ԹՅԱՆ երէցեա վարժապետ

(Շարունակելի) **ԳԷՈՐԳ. ՏԻՐ ՈՍՏՈՂԻՄԷՈՍԵԱՆ**

---

## Ի ՏԽՐԱՍՈՒԳ ՄԱՀ

## ՕՐ. Ք. Կ. ՍՊԱՐԹԱԼԵԱՆԻ

Վա՜ղ սիրելիս սեւսիրտ մանն գրեզ կապտեց,
Թողլով զմեզ խոր վշտի մէջ, սուգի մեծ,
Կրեցիր վա՜ղ տառապանքներ խոր անմման,
Գնա հանգչիլ անմահութեան օթեւան։

Աւաղ սեւ գոյժն ինձ շուտ հասաւ սիրելիս,
Դղրդեց գիս, արիւնեց սիրտս ու հոգիս.
Այս կեա՜նք, կարժէ՞ միթէ սիրել զայն այնքան
Երբ հեռ, ճախանճ, վիշտն ու սուգն անդ վխտան։

Անարժա՜ն կեանքն քանի սաստիկ-սիրէիր
Ու անողորմ չար ախտիդ դէմ կռուէիր,

Զևիր երբեք կեճաց կուռոյն մեջ դասալիք
Աբի ճոգուվդ, բարի սրտովդ զգայնիկ։

Ուսման սերն միշտ պահևիր մեջ սրտիդ,
Օրեր, ժամեր կը ճսկևիր աջքիդ։
Համբարելով այնքան շատ ու շատ պաշար
Վա՜ճ մրնշաղ ապագային քու համար։

Այնքան շնորհ ու այնքան ձիրք բնատուր
Մեզի համար եղան խաբկանք անճամբույր։
Հոգիդ ձգտեր միշտ անմուռնին, գեղեցկին,
Պատնեշ եղաւ սեւ մահն անոր ալացքին։

Հէ՛ք կոյս, շատ իսկ քաղցր բուեր քեզ այս կեանք
Ծողդոջեին երբ փափաքդ ու ըղձանք
Լուսոյ մշուշ քեզ երեւցան այս սին կեանք
Ու մարմրեիր անուրջիդդ մեջ անյատակ։

Քո տեղայոյզ սրտի տրոփմանց արձագանք
Զգամ ընդ միշտ աղեկիզող լանջիս տակ,
Այս փշուր մ'բուդր ի քոյդ սիրոյն չիշատակ
Տի չը լինի անմուռն սիրոյս իմ պատանք։

Փիլիսոփալի այն վճիռքդ իմաստուն
Կեճաց անբիւ ու քմահաճ դէպքերուն
Բաւեն միայն չիշեցնելու միշտ զքեզ
Զոր սիրեինք մենք խանդավառ ջերմապես։

Ցիչատակդ պիտի մնայ ի մեզ անմեռ
Վկայ լինին տապանակիդ ծաղկըներ,
Զորս ուռոգել պիտի գամ յար շիրմիդ քով
Սիրտս ի բունդ, ճոգիս խառով, ջերմ արտասուքով։

Վա՜ճ սիրելիս սեւ սիրտ մահն զքեզ կապտեց,
Թողուով մեզի խոր վշտի մէջ, սուգի մեծ։
Կրեցիր վա՜ճ տառապանքներ խոր անճմանց,
Գնա հանգչիլ անմահուրեան օթեւանն։

23 Օգոստոս 1894

ԵՈՒԳԱՆ

# ԼՐԱԲԵՐ

Մեծ ու փառաւոր տօնն հաստատուեցաւ Օսմանեան Պետութեան միլիոնաւոր ժողովրդոց մէջ կ'կատարուի Օգոստոս 19ին։ Մեր վեհափառ Սուլթանի գահակալութեան չքեղ տարեդարձն ի վեր կ'հանէ միշտ այն եղբայրակցական զգացմունքն զոր իր հաւատարիմ հպատակներն կ'տածեն իր գահուն հովանւոյն ներքեւ։ Ամեն աղօթատեղիներն կ'որոտան սրտագին մաղթանօք Նորին Վեհափառութեան արեւշատութեան համար, ցնծութեան աղաղակներ ամեն ուրէք լսելի կ'լինին և պաշտօնական ընդունելութիւններն և շնորհաւորութիւններն աշխարհիս ամեն կողմն տեղի կ'ունենան։ Եւ այս հանրային խնդակցութեան մէջ՝ յեղակարծ արկածից պատճառած նեղութիւնները կարծես կ'զսպրին՝ պի ամեն մարդ կ'զգայ, գիտէ որ մեր Վեհապետին նախախնամական հոգին պետութեան բարօրութեան համար անդուլ կ'հսկէ։ Իր Նախագահութեամբ կազմուած արկածելոց նպաստամատոյց Յանձնաժողովն ամեն օր կ'ընդունի հաւակրութեան և վստահութեան ապացոյցներն առ Օսմանեան Գահն, և արդէն գրեթէ 4 միլիոն դահեկանի հասած է ոչ միայն Թուրքիոյ զանազան կողմերէ այլ և տար աշխարհներէ հասած նպաստներու գումարը։ Անտարակոյս՝ Մայրաքաղաքն ցոյց արուած գործունէութեան, բարեգործութեան և տենդային աշխուժութեան նայելով՝ չուտով պիտի ջնջէ աւերուածներու և ազէտից հետքն և վերստին պիտի գտնէ իր չքեղութիւնն ի շնորհս մեր Վեհ. Կայսեր մարդասիրական և աշխարհաշինական խորհուրդներուն, որ հետզհետէ ի գործ կ'դրուին բանիբուն և գործունի բարձր պաշտօնէից միջոցաւ։

Եւ երկրաշարժն՝ դժբաղդապէս՝ դեռևս իր ոյժն առած չերևիր, քանի որ մօտերս ցնցեց Էրզինջան կողմն և Թումանիա, առանց սակայն զգալի վնաս տալու։ Ազէտից մեծագոյնն այժմ Մայրագոյն Արևելքի մէջ կ'երևի, Զինի ու Ճարոնի մէջ ծագած պատերազմի առթիւ՝ որ չուտով աւարտելու երես չունի, քանի որ երկու մեծ տէրութիւններ դէմ առ դէմ ելած՝ Պորէայի բացարձակ տէր լինելու նպատակաւ, ահագին պատրաստութիւններ կ'ընեն։ Ըստ երևոյթին՝ Զին աւելի հզօր ցամաքի վրայ, և Ճարոն ծովու վրայ, պիտի չափուին՝ մերժելով ամեն

միջամտութիւն, մինչև որ մին կամ միւսն յաղթական մնայ, այս անհաւանական պայմանաւ որ յաղթականն իր յաղթութեան պտուղը քաղէ։ Արդէն՝ հաշտութիւն հաստատելու համար՝ այլ և այլ եւրոպական տէրութեանց դեսպաններու ըրած փորձն Զինու Իտալական դեսպանին միջոցաւ՝ որոշ արդիւնք մը դեռ յառաջ չբերաւ, և Ճարոն աւելի կանոնաւոր վարչութեան տէր, աւելի քաջ ռազմագէտ, աւելի հարուստ քան Զին, որ օտար երիւրներու մէջ միսխաուութեան կ'դիմէ, միշդեռ Ճարոնի ազնուական դասակարգն միլիոններ կ'թափէ անտոկոս տէրութեան գանձն, Ճարոն՝ որքան որ Քորէայի Սէուլ մայրաքաղքի մօտ մի քանի կիւներու մէջ ծանր հարուածներ կ'ընդունի, սակայն հաւանական չթուիր որ վճռակի և հաշտութեան առաջարկներու հաւանի։ Սոյն պատերազմին առթիւ՝ միսիոնարներու և եւրոպացիներու դէմ աեղ տեղ եղած հալածանքը կրնայ ծանր հետեւանք ունենալ և եւրոպական տէրութեանց հաւաքական գործողութիւն մը հրաւիրել։ Անգլիա իր Խորհրդարանը կ'փակէ և Թագուհւոյն ճառն՝ ըստ սովորութեան, թէև ցամաք, կ'յայտարարէ իր պաշտօնէութեան ելմտական անօրէնութեանց մասին գոհունակութիւն և ժողովրդային ելմտացոյցին օգուտներն, որով չունևոր դասակարգին վրայ ցարդ ծանրացած տուրքը պիտի թեթևնան։ Միայն լորտներու ժողովը կը մերժէ Իրլանտացի արտաքսեալ վարձկաններու նկատմամբ օրինագիծն և իրեն դէմ նորանոր գանգատներ կ'գրգռէ։ Ռուսիա՝ որու վեհապետն՝ չափազանց աշխատութենէ զգացած տկարութիւնը կ'դարմանէ, օրինագիծ մը պատրաստելու վրայ է՝ մի քանի գաւառներու մէջ հաստատուած գերման դպրոցներու վերակազմելու, այսինքն հողատէր լինելու իրաւունքէն և զանազան կրթական արտօնութիւններէ զրկելու։ Իսկ Իտալիա ևս Մասուայի (Եւիթրիկէ) մէջ ունեցած երիւրները չէնցնելու համար վեց հազար իտալացի ամուրի մարդիկ կ'զրկէ, յատկապէս երկրագործական ձեռնարկներու համար՝ վերջէն աղջիկներն ալ յղելու խոստմամբ՝ եթէ խելքը գլուխները լինին։

# Ա.Յ. ԵՒ Ա.Յ.Ք

Անդրկովկասեան կմախք. — Մտերս ուշադրաւ գիւտ մ'ըրած է գիտուն մը, ի Բրէդմօօտ, Մորավիա գաւառին մէջ, որ հարուստ է նախապատմական նշխարներով։ Այս գիտունն, Հէր Մաշա, որ արդէն հարիւրաւոր մամմութ (անճետ փիղ) սպեղելով հանած է, այդ հսկայ կենդանիներուն մօտ առ մօտ գըտած է ընտանիքի մ'ամբողջ կմախքն, անդրկովկասեան էակներու միացորդն։ Բոլորն վեց անձեր են, որոց ոսկորաիքն ու գանկերն տարօրինակ մեծութիւն ունին։ Մասնաւորապէս՝ մարդու կմախքն անսովոր խաչորութեան կողմէ նշանաւոր է։

Անճանաչականութիւն և անաստուածութիւն. — Աչխարհիս խորհուղ դասակարգին մէջ առաջինն վանեց միւսն, և թէև անճանաչականութիւնն (agnosticism) անաստուածութեան հետ սոսկալի կ'չըփոթեն մարդիկ, սակայն ոչ միայն իրարմէ տարբեր այլև իրարու հակառակ են։ Անաստուածութիւնն այն վարդապետութիւնն է թէ՝ չկայ Աստուած, չկայ տիեզերք, այլ տարասեր երևոյթներու համախմբութիւն մը։ Բարոյապէս՝ ինքնախաբութեան փիլիսոփայութիւնն է այն, որ կ'ըսէ. — Ես, մարդս, ես աչխարհիս ամենամեծ լալն եմ, չկայ քան զիս մեծագոյնը։ — Ընդհակառակն անճանաչականութիւնը կ'հաստատէ թէ Աստուած այնքան մեծ է և մարդս այնքան փոքր, որ մարդ չէ կարող սահմանել Աստուածը, չէ կարող ըմբռնել զայն, և ոչ իսկ կարող է Անոր վրայ բաւական դաղափար ունենալ որպէս զի դուչակէ Անոր անճնաւորութիւնը։ Այս վարդապետութիւնն ևս թերահաւատ է, վասն զի կ'մերժէ մարդու հոգեկան բնութիւնն իրև դիտութեան աղբիւր ու միջոց. սակայն անաստուածութիւն չէ այն։ Ընդ հակառակն արդար հակադրութիւն մ'է անաստուածութեան նկատմամբ՝ որ տիեզերքէն կ'արտաքսէ Աստուածն, ինչպէս նաև վարդապետական ամբարտաւանութեան նկատմամբ՝ որ կ'ներևակայէ թէ Անսահմանը կարելի է սահմանաւորէն սահմանուիլ։

Ամերիկեան ամուսնութեան կնճռոտը. — Ամերիկեան նահանգաց մէջ ամուսնական օրինադիրք այնքան իրարմէ կ'տարբերին, և ծանր չփոթութիւններ կ'պատճառեն, որ ատոնց ինն գաւառ համաձայնութեամբ մասնախմբեր կ'կազմեն որպէս զի բոլոր

նահանգաց համար միօրինակ ամուսնական օրինագիր մը յօրինեն։ Անկախ են ամուսնալուծութեան տարօրինակ կանոններէն ծագած անպատեհութիւններէն։ Օրինակ մը կ'բաւէ ցոյց տալու թէ՝ մինչև բազմակնութեան կրնան տանիլ այդ կանոններն, բազմակնութիւն, զոր՝ Ամերիկեան մեծ Հասարակապետութիւնն աններելի և դատապարտելի նկատելով Մորմոններու մէջ՝ ջնջեց։ Անցեալ ամառ Ֆիլատելֆիոյ քաղաքացի մ'իր կինն այդ քաղաքին մէջ թողլով՝ Օհիո կ'երթայ և ամուսնալուծութեան վճիռ մը կ'ստանայ։ Ապա դառնալով Ֆիլատելֆիա կ'կարգալի անդ այրի կնկան մը հետ։ Առաջին կինն ամուսնալուծութեան վճիռն իրրև ապօրէն կ'մերժէ ու կ'բողոքէ՝ առարկելով որ այդ մասին ալդագիր չէր ընդունած։ Օհիոյ դատարանն նըկատողութեան չառնուր այդ բողոքն և իր նախորդ վճիռը կը պաշտպանէ։ Այն ատեն առաջին կինն Բէնսիլվանիոյ դատարանին կ'դիմէ որպէս զի իր «ամուսինէն» թոշակ պահանջէ։ Բէնսիլվանեան դատարանն անվաւեր կ'հրատարակէ Օհիոյ դատարանին վճիռն և կ'հրամայէ որ ամուսինն շաբաթական հինգ տոլար վճարէ իր կնկան։ Այս մարդն երկու օրինաւոր կիներու տէր կ'լինի, որոց պիտոյքը կ'պարտաւորի հոգալ և որոց հետ իրաւունք ունէր օրինաւորապէս ապրիլ։ Դատաւորն՝ որ բաւական լայն սիրտ մարդ մը կ'երևի, կ'յայտարարէ թէ՝ ամուսինն չկրնար՝ իրրև բազմակին՝ դատի կոչուիլ ի Բէնսիլվանիա, քանի որ գործըն այդ նահանգին մէջ չէր կատարուած, նոյպէս չէր կրնար դատափետուիլ ի Օհիո, քանի որ օրինաւոր էր անդ ամուսնութիւնն՝ և քանի որ ամուսնալուծութեան վճիռն անդ արուած էր, և թէ կարելի էր կնաթող մարդու մը համար զանազան նահանգներու մէջ այլ և այլ կիներ ունենալ, որ օրինաւոր կ'համարուին այդ նահանգաց մէջ, բայց ինք անպարտ կ'մնայ օրինաց առջև և չկրնար ամբաստանուիլ իրրև բազմակին։

Ջանգկնէք. — Օտար ազգակարաններ կ'հաստատեն թէ ելլատացիք հնարած են զանգակն, որպէս զի Օսիրիսի հանգէսներուն աւելի գործածեն։ Ջինացւոց մէջ այս կարծիքը կայ թէ զանգակներն Ֆրհատոսի ծննդեան 3000 տարի առաջ գոյութիւն ունէին իրենց մէջ։ Կ'ըսուի թէ Յայնք և Հոմայեցիք երբէք չէին գործածեր խոշոր զանգակներ։ Սակայն բազանաց և չուկաներու բացման ժամերն ամեն օր զանգակի ձայնով կ'ազդարարէին, և այնպէս կ'թուի որ այս նպատակին համար մանր զանգակներ բաւական չէին։ Թուկիդ իսկոնի ժամանակ՝ (400

Ֆ. Ա.) դիշերապահ պինուրները կ'շրջկին քաղաքն զանգակով որպէս զի պահակները միշտ արթուն պահեն իրենց օթեականեբուն մէջ։ Կիպչելեան վայրագ հանդէսներու մէջ՝ ինչպէս կը պատմէ Թէոդրիտ, քուրմերն զանգակներ կ'հնչեցնէին, ինչպէս նաև կապիրի քուրմերն իրենց չուայտ արարողութեանց ժամանակ։ Տիզէոս՝ Ատրատոի բանակին եօթ պետերէն մին, իր վահանին կոթէն հնչակներ կ'կապէր, ինչպէս Հռեսոս, Թրակիոյ մի թագաւորն, իր սրընթաց ձիերուն թամբերը զանգակներով կ'զարդարէր։ Ուշագրաւ պատմութիւն մը կ'աւանդեն մեզ երկու արարացիք, որ իններորդ դարուն Զինաստան ճամբորդածեն, ժողովրդային արդ արութեան զանգակներու մասին, որ բոլոր Զինի մէջ կ'գործածուէին։ Ամեն քաղքի իշխանին կամ կառավարչին գլխուն վերև մեծկակ զանգակ մը կախուած է եղեր, որու չուանն մտնի չափ երկայն, տեղւոյն աւետիք բանուկ հրապարակին վրայ կ'երևէր, այնպէս որ անիրաւութիւն կրող ամեն խեղճ մարդն չէր վարաներ չուանը քաշել։ Այն ինչ զանգակը կ'հնչէր, կուսակալն իսկոյն պէրսպոլոս կոչել տալով՝ արժանը կ'տնօրինէր։ Նոյն իսկ կայսեր գլխուն վրայ ժողովրդեան բարեկամ այդպիսի աղմկալի աղդարար մը կար, բայց այն որ առանց բանաւոր պատճառի զանգակը կ'զարնէր երկնային իշխանութեան կողմէ ծանր պատժոյ կ'ենթարկուէր։ Ի հարկէ՝ արդի լրագրական և ելեկտրական դարուս մէջ՝ անպէտ և անօգուտ կ'համարուին այդ տեսակ մետազական ազդարարներ, որ յատկապէս եկեղեցիներու վերապահուած են և որ հեռագիրէ պիտի մեծնան և աւելի բարձր պիտի ղոդանջեն, քանի որ քրիստոնեաներն առաջարներէն հեռանան։

Անգլիական լեզուն. — Անգլիականին հետ մրցող գլխաւոր լեզուներն են Ֆրանսականն, Սպանիականն, Ռուսականն և Գերմանականն։ Ֆրանսական լեզուն՝ իր չրջանին մէջ գանուող ֆըբանագէտներուն նայելով, կրնայ ըսուիլ թէ միայն է։ Սպանիականն չատ տարածուած է Հարաւ. Ամերիկա և Հիւսիսային Ամերիկայի հարաւային կողմերը։ Իսկ ուր որ Գերմանական լեզուն կ'մտնէ չուտով բնիկ լեզուին տեղի կ'տայ, և ընդհանրապէս Անգլիականին։ Ռուսական լեզուն, Գերմանականին պէս, մեծ ազդեցութիւն չունի արևմտեան քաղաքակրթութեան վրայ։ Նշանաւոր իրողութիւն մ'է որ անգլիականն ուր որ մտնէ կ'տիրապետէ միւս բնիկ և օտար լեզուներու վրայ։ Միացեալ-Նահանգաց մէջ միլիոնաւոր գերմաններ և այլ օտարականներ

կան որ անգլիախօսներու կարդն անցած են մէկ սերնդեան չրջանի մէջ՝ կորուսելով իսկ ցեղական անուններ։ Սակայն՝ Գանատա՝ ֆրանսախօս ժողովուրդն օր օրի կ'աւելնայ քան անգլիախօսները։ Պատճառն այս է որ ֆրանսական տարրն ազգականը կ'վանէ, այլ կուլ չտար։ Եթէ ֆրանսականն չատ քիչ անգամ միւս լեզուներու մէջ կ'կորսուի, անգլիականն միայն զոյն կ'վտարէ։ Այս երևոյթն զգալի է Ամերիկէ, ուսկից ֆրանսականն հետզհետէ կ'քաշուի հոլանտականին հետ։ Երեք դար առաջ Ամերիկա պատահած լեզուական պայքարն կ'կրկնուի այժմ և Ամերիկէ, յաղթանակն անգլիականին մնաց։ Լեզուներու տարածման պատմութիւնն յԱմերիկա բաւական զօրաւոր փաստ մ'է պուչակել տալու՝ որ ոչ մի լեզու, ի բաց առեալ արևելեան լեզուներն, սիրտ կարենայ մրցիլ Անգլիականին դէմ

Վ.

---

## ՀՈԳ. ՈՐԲԱԽՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Սոյն Ընկերութեան մեր հանդիսին 14րդ թուով հրատարակուած Տեղեկագրին մէջ՝ գրաչարներուն անուչադրութենէ մի քանի ակամայ զանցառութիւններ եղած լինելով՝ արժան կը դատուի սոյն յաւելուածով լրացնել։

Տիկին Թադուհի Ձէլէպեան ամիսն անգամ մը կերակուր կը չնորհէ Որբանոցին։

Օր. Զարուհի Վարպետեան կէս թուխ ամերիքան չնորհած է։

Պ. Սարգիս Միրիմանեան ախտարհացոյց տախտակ մը։

Հաճի Յակոբ Վարեէմէզեան մէկ գրատախտակ։

---

ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

# Ս. ՍԻՎՐԻԱՐԵԱՆ ԵՒ ԸՆԿՔ

## ՄԵԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

*Սոյն հանդիսաւոր վճռաբանութիւնն՝ ուր կը ծախուին դանազան բամպակեղէն, բրդեղէն, մետաքսեղէն նիւթեր, վաղուց կը վայելէ ոչ միայն Իզմիրի ամէն հասարակութեանց համաքուէն, այլ և իր բոլոր դուռ առած յաճախորդներուն վստահութիւնը որ արդէն քալ գնահատած են իր ապրանաց ընտրութեան, տոկունութեան, լաւութեան, չափերու ճշտութեան և գիներու անհամեմատ չափաւորութեան զգալի առաւելութիւններն, այնպէս որ միշտ գոհ ձեռացած և սոյն վճռաբանութիւնը պատուած են իրենց յանձնարարութեամբ։ Ինչպէս ցարդ նոյնպէս և այսուհետև Սիվրիսարեան վճռաբանութիւնն պատրաստ է միևնոյն դիւրութիւններն ընծայել տեղւոյս յաճախորդներուն, և յատկապէս գաւառացոց ուշադրութիւնը կը հրաւիրէ վերոյիշեալ առաւելութեանց վրայ։ Պատրաստ վստահ լինիլ թէ իրենց յանձնարարութիւններն գրալ կամ գործակատարներու միջնորդութեամբ, ամենայն ճշտութեամբ ու գոհութեամբ պիտի կատարուին։ Անատրակոյս գաւառացի և տեղացի նոր յաճախորդներ պիտի գտնէ, անձամբ դիմելով փորձել, ապրանաց դերազանցութիւն, Սիվրիսարեան ընդարձակ մթերանոցներու մէջ՝ որ կը գտնուի՝*

Ա.ՃՒ – Եօրիւք կաղնաձի փողոցն ՀԵՒ Ջուխր խանի առջեւ։

---

# ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԳՊՐՈՑ

Հիմնուած 1893ին Զմիւռնիա։

Սոյն գպրոցին մէջ տղոց կ'արուի, հասատատուն կրթութիւն օգտակար գիտութեանց վերաբերեալ։ Կ'աւանդուին Գերմաներէն, Ֆրանսերէն և Անգլիերէն որ պարտաւորիչ են։

Դպրոցս կ'ընդունի նաև դիշերօթիկներ։

Դպրոցական տարին կ'սկսի 1/13 Սեպտեմբերին։

Աւելի ընդարձակ տեղեկութեանց համար պարտ է դիմել գերմաներէն գպրոցին տնօրէնին։

Պուճխթէ-Փոշտա, Թիւ– 37

Ե.Տ. ՄԼՃ ԼՐՄՊԼՃՆ

# ԼԱ ՖՐԱՆՔՖՕՐԹՈՒԱԶ

(LA FRANCFORTOISE)

ՄՈՒԱՑԻՒՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆԿՖՈՐԹ

Դրամագլուխ ֆր. 6,250,000 Պահեստի դրամ 1,270,312 ֆր.

*Ընկերութիւնս կ'ապահովագրէ չոգենաւով ուղարկելի ամեն ապրանք, ինչպէս և դրամագլուխ, ևայլն դիւրամատչելի պայմաններով։*

*Գնոց և այլ ամեն տեղեկութեանց համար կը հրաւիրուին դիմել առ ընդհանուր գործակալն Զմիւռնիոյ և շրջակայից Վէդռան Ֆեբիանէ,*

ԳԱԿՈՐ Դ. ՎԷՄԵԱՆ

# ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆ

ԳԱՐԼՕ ՊՈՒՌՄՊԷՅԵԱՆ

Ֆրանկոց թաղ, կիւլհաղլեի 7,

*Սոյն գործատան մէջ մեծ խնամք և գեղարուեստական յաջողակութեամբ կը շինուին ամեն տեսակ պատկերներ ոչխ և այլ մեծութեամբ, պատկերաց վերարտադրութիւնք և մեծացնուին։ Կը ծախուին ամեն տեսակ լուսանկարչութեան վերաբերեալ մեքենաներ և այլ գործիքներ վերջին գրութեամբ կատարելագործուած։*

**Փափաքողաց մասնաւոր ուշադրութեան։**

ԴԻՒՐԱՄԱՏՉԵԼԻ ԳԻՆԵՐ

Պատիւ ունիմ ծանուցանել Աւրգոյ Հասարակութեան թէ՝ ամիջական կերպով կը գործեմ ակուայի ամեն անտառներէն գալերը։ Ակռաներու փտած մասերը կը լեցնեմ փտութիւնը ինչ վիճակի մէջ որ ալ ըլլայ, ջղերուն անզգայութիւն տալու համար մի քանի անգամ միայն գործածելով։ Լցուած ակռան ապագային ոչ պիտի ցաւի, ո՛չ պիտի մաշի և ո՛չ պիտի թափի։

Ա՛յն անձինք որ քանիցս կեղծ ակռաներ շինել տուած են և միշտ դժգոհ մնացած, թող հաճին անգամ մը ինձ դիմել և ես պատրաստ եմ մինչև իսկ ՄԱՇԱԿ ու անոր լինտերու վրայ գետեղել ակռաներու ամբողջ շարեր և կամ անջատ ակռաներ, առանց ոսկեղէն թելերու յոդնեցուցիչ գործածութեան։

Նոր գրութեամբ կը հաստատեմ ակռաներու ամբողջ շարեր անգլիական քաուչուքի վրայ։ Ա՛յս գրութեամբ քիմքն իր ՁՈՒՇԱԿը և լեզուն իր ԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՐՈՎՆ ու ՆՐԲՈՒԹԻՒՆը ՄԻՇՏ կը պահէն։

Փտած ակռաներու արմատներն անվնասական կերպով և առանց ցաւ պատճառելու կը հանեմ։

Փափաքողք կրնան դիմել Պաամխանէ փողց, թիւ 120, 8-12 կ. Ա. և 1-7 կ. ե.

ՏԻԳՐԱՆ ՏԻՐԱՑՈՒԵԱՆ

# 36350 ՈՍԿԻՆՈՑ
## ՀՍԿԱՅԱԿԱՆ ՎԱՃԱՌԱՀԱՆԴԷՍ

# ԲՕԼԷՄՈՍԻ

## (Ο ΠΟΛΕΜΟΣ)

*Հրդեհհեալ մթերանոցներէն ազատուած ապրանքներու*

*Պէտք ունեցողք ու չունեցողք թող փութան դնել այս ապրանքներէն որք անհատատալի կերպիւ աժան դիներով կը վաճառուին։*

*Հրդեհէն ազատուած և այսչափ կարեւոր զեղչերով ի ցոյց դրուած վաճառքներն հետեւեալներն են.*

*Դարակ՝ չրջազգեստոցու բրդէ գործուածներու, վուալներու եւ*

*Դարակ՝ մանր մունր ապրանքներու, ժանեակ, երիզեւ*

*Դարակ՝ արանց, կանանց և տղայոց վերարկուեալ կօշիկներու.*

*Դարակ՝ տպաժոյն, մուշլինի, ժագօնէի եւ*

*Դարակ՝ շապիկի և տարատի վերարկուեալ կտաւներու եւ*

*Դարակ՝ ճերմակեղինաց, խատայի, շղարշի, վարագոյրի եւ.*

*Բօլէմոսի մթերանոցներու այս զարմանալի վաճառահանդէսը ի գործ պիտի դրուի նոյն տեղը՝ Պարմաք Գուխու փողոցը, ուր որ հրդեհն երեւան եկաւ։*

**Ժ. Մ. ԳՕՆՏՈՒԼԻՍ ԵՒ ԸՆԿ.**

*Ծանօթ.* — *Վաճառատունք առաւօտեան ժամը 9 ին պիտի բացուին։*

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

# ՏԻՕԵՆԻՍ

(GRANDS MAGASINS DIOGENIS)

*Պատիւ ունինք ծանուցանել քաղաքիս Պատ. Հասարակութեան թէ ի վաճառ դրած ենք* **ԱՄԵՆ** *տեսակ ապրանք* **ԽԻՍՏ ԱԺԱՆ** *դներով, այնքան աժան՝ որ գնողները* **ԱՆՀԱՒԱՏԱԼԻ** *պիտի երևան։*

*Ապրանքներու գիները այսքան կատարելու պատճառը նոր գալիքներու տեղ պատրաստելու համար է։*

*Պատ. Հասարակութիւնը ոչքան շատալ այնքան շահառու պիտի ելնէ։*

**ԱԺՆՈՒԹԻՒՆ**

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

# ԿԱՐԱՊԵՏ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԵ

*Շատ բարև Ազն. Տիկիններու և Նաշխի Օրիորդներու*

*Եթէ կուզէք ձեր փափուկ մատներու տակ, գեղեցիկ, ձևաւոր, կոկիկ և աղուոր վերջին նորաձևութեանց համաձայն ԹՈՐՇՈՆի գործիք մ՚ունենալ, որ ձեր պարապոյ ժամերուն փոքր ջղձնելով, գոյնզգոյն գնդասեղներով, ծովագոյն կամ վարդագոյն թղթի վրայ, ըստէր, ըսէր ներդաշնակութեամբ, ձեր մատներու նրբին ճարտարութիւնն ցոյց տալ, պարտիք հատ մը առնել իմ չինած ԹՈՐՇՈՆի բարձերէն, զորս վերջին կատարելութեան հասուցած եմ, որու ապացոյցն է՝ Ֆրանկաց թագը նշանաւոր վաճառատանց մէջ իմ չինածներուս ի վաճառ դրուիլն, և որու նմանը Իտալիոյ մէջ ոչ ոք կարող է չինել։*

Ասկեց զատ՝

*Մտադիր եմ 1900ի Բարիզի մէջ բացուելիք տիեզերական ցուցահանդեսին հատ մը դրկել ի գնահատութիւն։*

*Փութացէք ուրեմն առնիլ Տիրուհիք, իմ չինած ԹՈՐՇՈՆի բարձերէն մէյմէկ հատ գնելու, որու չահովն՝ ձեր հնարհիւ՝ միտք ունիմ տուն մը չինել տալ։*

ՄԷԿ ԹՈՐՇՈՆի բարձ, 38 հատ ՖԻԶՕ 30 ֆր., 1 ՃԱԽԱՐԱԿ, 40 ԴՆԴԱՍԵՂ և ԹՈՒՂԹ միասին՝ 1 Ա.Թ. մէկտեղ։ Միայն ԹՈՐՇՈՆի բարձը 20 ղրչ. անցուկ։

ԿԵՂԲՆԱԿԱԳԵՂ Հայոց Թաղ

**ԿԱՐԱՊԵՏ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ**

---

**կենցաղ կամ դաստիարակութիւն**։ — Հերպերտ Բրէնսէր, թարգ. Ց. Գ. Մ. Կ. Պոլիս, Տպագր. Յ. Մատթէոսեան։ Կեդրոնատեղի Մատթէոսեան տպարան և Պ. Պալէնց գրատուն։ Գին 10 ղրուշ արծաթ։

**Նուարդ**։ — Գրեց Գ. ՍԱՐԱՖԵԱՆ, Կ. Պոլիս. Տպագր. Նշան Կ. Պէրպէրեան։ Կեդրոնատեղի Պ. Պալէնց. Գին 6 ղրուշ։

**Նոր փճչակ**, Գրքոյկ ընթերցանութեան և արտասանութեան փոքրահասակ մանուկներու համար։ Կ. Պոլիս, Տպագր. Յ. Մատթէոսեան. Տէր և հրատարակիչ Պ. Պալէնց. Գին 1 ղրշ. 100 օրինակ 60 ղրուշ։

**Տարրական քաւաբանութիւն**, Մասուր և գրաւոր, Ա. և Բ. տարի 7էն 9 տարեկան տղոց։ Կ. Պոլիս Տպագր. Յ. Մատթէոսեան։ Կեդրոնատեղի Պալէնց գրատուն. Գին 4 ղրուշ։

**Ասող Բեթլեհէմի կամ սկզբունք ճշմարտութեան**։ Գրեց Մ. ԳՕՋՈՒՆԵԱՆ. 2 ղրշ. փոխանակ 5 ղրշ. ի։ Կէս. Պ. Պալէնց գրատուն, 20 Զաքմաքճըլար Կ. Պոլիս։

**Նոր Այբենարան** պատկերազարդ Ֆրանս. լեզուի ի պէտս հայ ուսանողաց, Հայ. բացատրութեամբ, Դ. ԹԷՐԶԵԱՆ. գին 1 1/2 ղրշ կէս. Պ. Պալէնց։

# ՎԱՐԺԱՐԱՆ ՄԻՒԹԱՐԵԱՆ ՀԱՐՑ

## ԸՆԴ ԲԱՐՁՐ ՀՈՎԱՆԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ ԱԻՏՐ. ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ Ի ՋՄԻՒՌՆԻԱ

Վարժարանիս տարեկան ուսմանց կանոնաւոր ընթացքն պիտի սկսի Սեպտեմբեր ամսոյ 5/17 ին։ Վարժարանս կ'ընդունի կիսաթոշակ և ընդ հսկողութեամբ արտաքին աշակերտներ։

Ուսմանց դասախօսութեան լեզուն է Գաղղիերէն, բայց մի և նոյն ժամանակ՝ ընտիր ձեռնհասութեամբ՝ կ'ուսանգուին Անգլիերէն, Գերմաներէն, Իտալերէն, Յունարէն և Տաճկերէն լեզուներն, իրարաքանչիւրն իր սեպհական բարբառովն։ Արդի Հայերէն լեզուի ուսումն որ մինչև իրրև մայրենի բարբառ՝ մեծ խնամք վայելած է վարժարանիս մէջ, նոյնը՝ առաջիկայ տարւոյս մէջ [illegible] կորացընելու և մշակելու համար, վարչութիւնս մ[illegible] նիւթեր, մայրենի լեզուաւ դասախօսել [illegible] եթէ յաջողի անոնցմէ բաղկացեալ առանձին դասընթացքներ։ Վարժարանիս ուսմանց ցատկագիծն [illegible] Գաղղիոյ մէջ ընդունուած և մեծ [illegible] ծագրուած երկրորդական ուսման արդի [illegible] յայ ժամանակիս պիտոյից և պահանջմանց [illegible] յարմարին։ Մեծ հոգ կը տարուի վարժարանիս ուսանող տղոց [illegible] մէջ՝ ի մասնաւորի վսեմ ուսականական ճիւղին, Տեղւոյն հանգամանաց և անհրաժեշտ կարօտութեանը պատասխանելու համար։

Վարչութիւնս՝ իւր նպատակին հասանելու և իւր ուսմանց ծրագրին յաջողութեամբ ի գլուխ հանելու համար, արդէն՝ ատակ, անուանի և մասնագէտ Ուսուցչաց տուաւար խմբի մ'ամբողջութիւնը հոգացած է, և իւր տրամադրութեան ներքև ունի այժմ 16 արտաքին ուսուցիչ, որոնց մեծագոյն մասը վերկայեալ են, և սոքա՛ալ առանձինն պատուոյ տիտղոսին գաղղիոյ ճեմարանէն պատուուած։

Անդրագոյն տեղեկութեանց, և ընդունելութեան պայմանաց խնամուտ ըլլալու համար, դիմել վարչութեանս՝

Գ.Նուրիս մանալե, թիւ 89

Զ. Իւանիա, 2 Սեպտ. 1894

Վարիչ

Հ. ԱՆՏՈՆ ԱՐԴ ԹՈՐՈՍԵԱՆ